Ազգ Azg
25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 188(5040)
ISSN: 1829-1651

# «Մենք բոլորս Ռուսաստանի քաղաքացիներ ենք»

## *Արա Աբրահամյանը՝ ՌԴ-ում ապրող հայերին եւ ադրբեջանցիներին*

Ռուսաստանի հայկական եւ ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչները համաձայնել են ստեղծել մշտապես գործող համատեղ կազմակերպական հանձնաժողով, որն օպերատիվորեն կարձագանքի Ռուսաստանի տարածքում առաջացող բախումնային իրավիճակներին: Հանդիպումը տեղի է ունեցել Ռուսաստանի հայերի միության եւ Ռուսաստանի ադրբեջանցիների դաշնային ազգային-մշակութային ինքնավարության նախաձեռնությամբ, մասնակցել են ինչպես երկու կազմակերպությունների նախագահներ **Արա Աբրահամյանը** եւ **Սոյուն Սադիկովը**, այնպես էլ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ **Արմեն Ջիգարխանյանը**, ԱՊՀ հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի գործադիր տնօրեն **Արմեն Սմբատյանը**, պրոֆեսոր **Յուսիֆ Ամիրասլանովը**, հայազգի եւ ադրբեջանցի լրագրողներ, հասարակական եւ երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Երկու համայնքների հանդիպումների առնչությամբ ձեռքբերված պայմանավորվածությունը, ըստ հանդիման մասնակիցների, կնպաստի հանդուրժողականության եւ վստահության մթնոլորտի ստեղծմանը Ռուսաստանում ապրող հայերի եւ ադրբեջանցիների միջեւ:

«Մենք բոլորս Ռուսաստանի քաղաքացիներ ենք ու այստեղ կիսելու բան չունենք, հակառակը, մեր փոխգործակցությամբ մենք պետք է օրինակ ծառայենք այլ երկրներում ապրող մեր համայնքների համար», հանդիպման բացմանը նշել է ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը: Նա շեշտել է, որ այս հանդիպումների նպատակը ղարաբաղյան խնդրի լուծումը չէ:

Ռուսաստանի ադրբեջանցիների ներկայացուցիչ Սոյուն Սադիկովն իր հերթին նշել է, որ իր եւ Աբրահամյանի ընկերական հարաբերությունները հաճախ հնարավորություն են տվել լուծելու երկու համայնքների երիտասարդ ներկայացուցիչների միջեւ ծագած բախումային իրավիճակները:

Հանդիպման մասնակիցները ծափերով են դիմավորել Արմեն Ջիգարխանյանին: Նա նշել է, թե կան ուժեր, որոնք ձգտում են խառնել երկու ժողովուրդների հարաբերությունները: Ու հիշել է ժամանակները, երբ Երեւանի ռուսական դրամատիկական թատրոնը Բաքվում հյուրախաղերի էր, կամ Հայաստան էր եկել երգչուհի Զեյնաբ Խանլարովան: Հանդիպմանը քննարկվել են նաեւ սուր, կենսական նշանակություն ունեցող հարցեր:

Երկու համայնքների ներկայացուցիչների հաջորդ հանդիպումը սպասվում է նոյեմբերի կեսերին:

**Վ. Պ.**

# Նվազագույն աշխատավարձը՝ 35 հազար, քննադատությունն էլ հետը



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նվազագույն աշխատավարձի մասին օրենքում կառավարության նախաձեռնած փոփոխություններով 2013 թվականից նվազագույն աշխատավարձը սահմանվում է 35 հազ դրամ, իսկ անվանական աշխատավարձը՝ մոտ 46 հազար, տարբերությունը կազմելու են գործատուի վճարած հարկերը: Բյուջեի միջնաժամկետ ծրագրով այս բարձրացումն արդեն նախատեսված է եւ այս տեմպերով նվազագույն աշխատավարձն արդեն 2017 թվականին պետք է կրկնապատկվի: Երեկ Ազգային ժողովում այս հարցը ներկայացրած ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանին** պատգամավորների տված հարցերի գլխավոր ենթատեքստը, սակայն այն էր, որ դա բարձրացում չէ, երբ նվազագույն զամբյուղը շատ ավելի բարձր գումար է կազմում:

Ստերի փոխանակության ժամանակ արտահայտվեցին բոլոր մտահոգությունները՝ միաժամանակ այս տեսակ օրինագծի ներկայացման դեպքում սովորաբար քաղաքական ենթատեքստի մեծ լուքքն օգտագործելով:

ԲՀԿ-ական, տնտեսագետ **Միքայել Մելքումյանը**, պայմանավորելով այս սուղ բարձրացումը առաջարկ-պահանջարկային ու գնաճային ճնշումներով՝ եզրակացրեց, որ 35 հազ. դրամ նվազագույն աշխատավարձով բնակչության վիճակը չի բարելավվում: Ըստ նրա՝ նվազագույն աշխատավարձի սահմանը 50 հազարի մատույցներում է: ՀԱԿ-ից **Լյուդմիլա Սարգսյանը** ԱՎԾ տվյալը բերեց՝ 53 հազար դրամ է կազմել նվազագույն զամբյուղը, այդ դեպքում ինչո՞ւ է կառավարությունը 35 հազ. դրամ սահմանում, չնայած գիտեր կառավարության պատասխանը՝ բյուջեի հնարավորությունն այդ է:

*Տես էջ 2*

# «ԱԳՆ շենքը վաճառվել է, երբ լավ առաջարկ է ներկայացվել»

## *Հայտնեց պետգույքի կառավարման վարչության պետը*

Պետգույքի կառավարման վարչության պետ **Արման Սահակյանը** երեկ հրավիրած մամուլի ասուլիսում անդրադարձավ վարչության 9 ամսվա գործունեության արդյունքներին, բայց ասուլիսի քննարկման հիմնական առարկան դարձավ արտաքին գործերի նախարարության շենքի վաճառքի կառավարության որոշումը:

Պատասխանելով հարցերին՝ Արման Սահակյանն ասաց, որ արտգործնախարարության շենքը վաճառվել է, երբ լավ առաջարկ է ներկայացվել: Նախկինում նույնպես եղել են առաջարկներ, բայց դրանցում ցածր գին է առաջարկվել: Եթե Երեւանի կենտրոնում, մասնավորապես ԱԳՆ շենքի շրջակայքում անշարժ գույքի շուկայական գները 1500-2000 դոլարի սահմաններում են 1 քմ-ի համար, ապա ԱԳՆ շենքի համար գնորդը վճարելու է 3600 դոլար 1 քմ-ի դիմաց: Արման Սահակյանը հիշեցրեց, որ այդ շենքը մինչ արտգործնախարարություն դառնալը ունեցել է այլ գործառույթներ եւս, եւ այստեղ տարբեր ծառայություններ են մատուցվել: «Այդ շենքն, ի վերջո, ոչ ոք իր հետ չի տանելու ոչ մի տեղ, շարունակելու է մնալ իր տեղում», ասաց պետգույքի կառավարման վարչության պետը, ավելացնելով նաեւ, որ նրա արտաքին տեսքի պահպանման վերաբերյալ կետն ամրագրված է պայմանագրով:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե այլ շենքերի նկատմամբ լավ առաջարկ լինելու դեպքում ե՞ւս դրանք կվաճառվեն, Արման Սահակյանն ասաց, որ եթե լինեն լավ առաջարկներ, ապա դրանք քննարկման ենթակա կլինեն: Նա նշեց, որ կան նման խոսակցություններ տրանսպորտի եւ կապի նախարարության շենքի վերաբերյալ, բայց հայտարարեց, որ առաջարկ այս պահին չկա: Նույնը նա ասաց նաեւ պետական կոնսերվատորիայի շենքի մասին:

Սեփականաշնորհման ժամանակ ներդրումային պարտականությունների կատարման պայմանագրերն այսուհետեւ ավելի են խստացվելու եւ դրանք չկատարելու համար նախատեսվելու են լուրջ տույժեր: Պետգույքի կառավարման վարչության պետը տեղեկացրեց, որ ներկայումս 4 մասնավորեցված հյուրանոցներ կան, որտեղ հիմնանորոգման եւ գործարկման աշխատանքները չեն կատարվել՝ «Դվինը», «Սեւանը», «Շիրակը» եւ Սասունցի Դավթի արձանի մոտի կիսակառույցը:

Ըստ Արման Սահակյանի՝ պետական բաժնեմաս ունեցող ընկերությունները պետք է ներկայացնեն բիզնես ծրագիր, թե ինչքան շահութաբաժին պետք է վճարեն պետությանը, իսկ այդ ընկերություններում պետությունը կնշանակի իր ներկայացուցիչներին, որոնք կդիտարկեն թե ինչպես է կառավարում ընկերությունը, եւ առաջարկներ կներկայացնեն ընկերության առողջացման վերաբերյալ:

Մամուլի շենքում կշարունակեն գործել լրատվամիջոցները՝ վճարելով միայն սպասարկման վճար, իսկ մյուսների համար կգործեն վարձակալության գներ: Արման Սահակյանը տեղեկացրեց, որ վերանորոգվել է այդ շենքի տանիքը, որոշ դեպքերում՝ միջանցքները, նախատեսվում է վերելակների եւ սանհանգույցների նորոգում:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# «Զվարթնոցը» դարձյալ դադարեցրեց «Արմավիայի» չվերթերը

**«Զվարթնոց» օդանավակայանը կրկին դադարեցրել է «Արմավիա» ավիաընկերության չվերթերի սպասարկումը: Ըստ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության՝ պատճառն այն է, որ այս պահին ավիաընկերության պարտքը կազմում է 3 միլիոն 360 հազար դոլար, այսինքն՝ ավիաընկերությունը կրկին գերազանցել է համաձայնագրով ամրագրված 2 միլիոն 360 հազար դոլարի սահմանը:**

# Նոր վանդալիզմ արձանների դեմ

**Ես չեմ հասկանում՝ ինչո՞ւ են հայերն այսքան դաժան դարձել, որտեղի՞ց այսքան ատելություն: Ատելությունն արդեն անցել է բոլոր սահմանները, իրար ատելուց բացի ատում են արձանները: Դեռ մարդը մարդուն ատելը կարելի է տրամաբանորեն հասկանալ, բայց արձան ատելը նոր «մշակույթ» է: Որքա՞ն պետք է խոշտանգեն մեր արձանները:**

**Հիմա էլ որոշ արձանասպանցներ կտրել են Հռոմեացի զինվորի առնանդամը: Ի՞նչ անուն տանք նրանց, երեւի տառապում են սեփական մարմի մասերի թերարժեքության բարդույթով, որ արձանի նկատմամբ նման յուրահատուկ մոտեցում են դրսեւորում, ախր ոնց կարելի է նախանձել արձանին:**

**Մեր ժողովրդին պետք է արձանների հետ հաշտեցնել, հակառակ դեպքում, եթե այսպես շարունակվի՝ մենք կմնանք առանց արձանների:**




**ԱՆԱՀԻՏ ԱՆԱՆՅԱՆ**

# ՀԲԸՄ 87-րդ ընդհանուր ժողովի ընթացքում հանգանակվեց 250,000 ԱՄՆ դոլար ի նպաստ սիրիահայության օգնության ֆոնդին

Հոկտեմբերի 14-21-ը Հայաստանում գումարված ՀԲԸՄիության 87-րդ ընդհանուր ժողովի ավարտին տեղի ունեցած հրաժեշտի միջոցառման ընթացքում, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 20-ին, ընդառաջելով սիրիահայերի առաջնային կարիքները հոգալու նպատակով հանգանակություն կազմակերպելու կոչին, աշխարհի տարբեր երկրներից ժամանած միության պատվիրակների ու հյուրերի կատարած նվիրատվությունների շնորհիվ հանգանակվեց 250 հազար ԱՄՆ դոլար ի նպաստ սիրիահայության օգնության ֆոնդին:

ՀԲԸՄիության կենտրոնական Վարչական ժողովի օգոստոսի 3-ի որոշումով մեկ միլիոն ԱՄՆ դոլարի չափով օժանդակության պահեստի գումար էր առանձնացվել սիրիահայության կարիքների համար: Ավելի ուշ, ՀԲԸՄիությունը կոչով դիմել էր սփյուռքահայությանը՝ զանգվածային ու անհապաղ օգնության ձեռք մեկնելու սիրիահայ մեր հայրենակիցներին: Նվիրատվություններ կատարելու ՀԲԸՄիության կոչին ընդառաջել են բազմաթիվ հայրենակիցներ: Համադրելով իր աշխատանքները Սիրիահայ չափ օգնության մարմնի հետ, որը համախմբում է համայնքի բոլոր հայկական կազմակերպությունները, Սիրիայի մեր կենտրոններում կազմակերպվում են մարդասիրական օգնության աշխատանքներ: Ի հավելումն սիրիահայությանը տեղում մարդասիրական օգնություն հասցնելու շարունակվող ծրագրին, ՀԲԸՄիությունը, ՀՀ սփյուռքի նախարարության հետ համադրում է իր աշխատանքները Հայաստանում սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող հասարակական կազմակերպության շրջանակներում: Միության տրամադրած տարածքում գործում է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Հայաստանում ապաստանած սիրիահայերն ամեն օր այցելում են կենտրոն, որտեղ հնարավորություն են ունենում հավաքներ անցկացնելու, ծանաչողական հանդիպումներ ունենալու, ինչպես նաեւ իրենց հուզող հարցեր քննարկելու: Կարիքավոր ընտանիքներին տրամադրվում է նաեւ անհրաժեշտ նյութական օգնություն:

# Ամեն ինչ չէ, որ կարելի է բարձրաձայնել

Երեկ Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ ԲՀԿ-ի եւ կառավարության միջեւ փոքրիկ լարվածություն երեւակվեց, երբ ԲՀԿ-ական պատգամավոր **Էլինար Վարդանյանը** սկսեց հետաքրքրվել այդ օրը բացակա արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի այցերի աշխարհագրությամբ ու նպատակահարմարությամբ, նշելով, թե որպես հասարակ քաղաքացու իր համար հետաքրքրական է, թե ի՞նչ է անում մեր նախարարը Նոր Զելանդիայի, Կոնգոյի նման երկրներում (հատկապես այս կարգի երկրներ այցերը հասկանալի չէին Է. Վարդանյանին): Նրա կարծիքով՝ մի շարք թանկ եւ աննպատակահարմար այցերի միջոցները կարելի է խնայել եւ ուղղել նվազագույն աշխատավարձի նորմալ բարձրացմանը (երեկ քննարկվում էր նվազագույն աշխատավարձը 2013-ին 2500 դրամով բարձրացնելու օրինագիծը):

Հարցին պատասխանած վարչապետ **Տիգրան Սարգսյանը** քաղաքական ենթատեքստ տեսավ հարցում, նշելով, թե Է. Վարդանյանին հազիվ թե բավարարի ըստ էության իր պատասխանը, մանավանդ Վարդանյանը, ըստ վարչապետի, այլ հարցերի հետ համադրելով էլ կարող էր հարց տալ, ասենք՝ ինչպես կարելի է այցելություններ անել, երբ երկրում 30 տոկոս աղքատություն է եւ այլն: Տ. Սարգսյանը չէր կիսում Վարդանյանի գնահատականները, մանավանդ այս նույն դահլիճում հաճախ է հակառակ քննադատություն արվում, որ միջազգային առումով ակտիվ չէ Հայաստանը: Ասաց, որ ԱԳՆ ղեկավարի այցելության երկրները եւ նպատակները քննարկվում են երկրի ղեկավարության հետ եւ ըստ այդմ այս կամ այն այցի նպատակահարմարության վերաբերյալ որոշում է կայացվում. Հայաստանի տեսակետը այս կամ այն երկրում տեղի ունեցող կարեւոր միջոցառման ժամանակ ներկայացնելը ազգային անվտանգության խնդիր է, ըստ վարչապետի, այդ այցերի համար նախատեսված ֆինանսավորումն էլ սոցիալական խնդիրներ լուծելուն ուղղելու առաջարկը կոռեկտ չէ:

«Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ռ. Հակոբյանը կառավարության ուշադրությունը հրավիրեց Սիրիայի եւ Մերձավոր Արեւելքի տարածաշրջանի իրադարձությունների վրա, երբ երկու կողմերի միջեւ տեղի ունեցող հակամարտություններում հաճախ ներկա է երրորդ կողմ՝ Թուրքիան, որը փորձում է հեգեմոն դեր ստանձնել տարածաշրջանում՝ ի վերջո Իրանի դեմ դուրս գալու նպատակով, ու Ղարաբաղի հարցը ավելի ուշ հետագա զարգացումների մեջ դիտարկելու հնարավորությամբ: Վարչապետ Տիգրան Սարգսյանը հանգստացրեց, թե երկրում կան ինստիտուտներ եւ կենտրոններ, որոնք ուսումնասիրում եւ վերլուծում են զարգացումները եւ տեղյակ պահում Հայաստանի իշխանություններին, դրանց հիման վրա քայլեր են ձեռնարկվում, սակայն ամեն ինչ չէ, որ կարելի է բարձրաձայնել: Բացի այդ՝ ստրատեգիական գործընկերների՝ ԵՄ-ի, Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հետ նույնպես զարգացումները եւ մարտահրավերները քննարկվում են, այնպես որ բացթողումները նրանց ներկայացրած տեղեկատվության շնորհիվ է լրացվում, իսկ ընդհանրապես՝ մեր հիմնական մոտեցումները երկրի ազգային-անվտանգության դոկտրինում արտացոլված են:

Ս. Խ.

# ՀՀ սփյուռքի նախարարն ընդունեց «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ Ռոպեր Հատտեճյանին

Հոկտեմբերի 24-ին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց պոլսահայ գրող, հրապարակախոս, «Մարմարա» քաղաքական, հասարակական օրաթերթի գլխավոր խմբագիր, բազմաթիվ մրցանակների ասպետ Ռոպեր Հատտեճյանին:

Մեծապես գնահատելով վաստակաշատ խմբագրապետի՝ ավելի քան չորս տասնամյակ Սփյուռքի ամենահին համայնքներից մեկում՝ Պոլսում օրաթերթը պահելու եւ նորանոր բարձունքների հասցնելու ջանքերը՝ գերատեսչության ղեկավարը նշեց, որ միայն նման անհատականությունների շնորհիվ է համայնքը ապրում եւ պահպանում իր հայեցի դիմագիծը:



Շնորհակալություն հայտնելով գերատեսչության ղեկավարին ջերմ ընդունելության եւ համայնքի հանդեպ ունեցած մշտառկա հոգատարության համար՝ պարոն Հատտեճյանը նշեց, որ դա է Սփյուռքում համայնքների պահպանման իրական եւ մեծ ազդակը:

Տիկին Հակոբյանի այն խոսքին, թե «Մարմարա»-ի ամենակարեւոր առավելությունը տեղական հորդորներին տեղիք չտալը եւ միայն հայերեն լեզվով թերթի հրապարակումն է, խմբագրապետը հավաստիացրեց. «Ես իմ գրականութենես ո՛չ որակով կը հպարտանամ, ո՛չ ալ քանակով, այլ միայն՝ լեզուով»:

ԷԴ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՅՑԸ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

# Մեքսիկայում՝ ըստ հարմարության. հիմա էլ սատարում են ինքնորոշման իրավունքին

**Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Մեքսիկա այցելության շրջանակներում հոկտեմբերի 23-ին հանդիպել է Մեքսիկայի պատգամավորների պալատի նախագահի առաջին տեղակալ Ֆրանցիսկո Արոյո Վիերային:**

**Ըստ ԱԳՆ հաղորդագրության՝ Նալբանդյանն ընդգծել է, որ նախորդ գումարման Պատգամավորների պալատի՝ ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ իրականությունը խեղաթյուրող հայտարարությունը ոչ միայն վնաս է հասցրել երկկողմ հարաբերություններին, այլ նաեւ կոպտորեն հակասում է հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ միջազգային հանրության դիրքորոշմանը, որը բազմիցս արտահայտվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարների կողմից:**



**Նախարարի բնորոշմամբ, նման քայլերը վնաս են հասցնում միջազգային հանրության կողմից հիմնախնդրի հանգուցալուծման ուղղությամբ գործադրվող ջանքերին, վտանգում են տարածաշրջանային կայունությունը:**

**Մեքսիկայի խորհրդարանի բարձրաստիճան ներկայացուցիչն իր հերթին նշել է, թե տեղյակ է վերոհիշյալ հայտարարության բացասական հետեւանքների մասին, պարզաբանումներ է տվել այդ կապակցությամբ եւ ընդգծել, որ Մեքսիկայի Պատգամավորների պալատը միանշանակ սատարում է ժողովուրդների ինքնորոշման միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքին, եւ խորհրդարանին այլ դիրքորոշման վերագրման փորձերը չեն համապատասխանում իրականությանը:**

**Էդվարդ Նալբանդյանը գոհունակություն է հայտնել Մեքսիկայի խորհրդարանի կողմից ինքնորոշման իրավունքի սկզբունքին միանշանակ սատարելու, ինչպես նաեւ Մեքսիկայի արտաքին հարաբերությունների քարտուղարությունում ստացված հավաստիացումների կապակցությամբ առ այն, որ պաշտոնական Մեքսիկոն աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի ղարաբաղյան հիմնահարցի հանգուցալուծման վերաբերյալ արված առաջարկություններին եւ այդ ուղղությամբ գործադրվող ջանքերին:**

**Մեքսիկայի արտգործնախարարությունից Հայաստանի ԱԳՆ ղեկավարին տեղեկացրել են, որ հանրային կարծիքի խիստ դժգոհության հետեւանքով Մեքսիկոյի քաղաքապետարանը որոշում է կայացրել հատուկ հանձնաժողով ստեղծել՝ ադրբեջանական հուշարձանների ճակատագիրը որոշելու նպատակով:**

**Ավարտելով այցելությունը Մեքսիկա՝ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը ուղեւորվել է Գվատեմալա:**

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# Շնորհավորություններ հոբելյար Աստղիկ Գեւորգյանին

**Հայաստանի լրագրողների միության անխոնջ նախագահ տիկին Աստղիկ Գեւորգյանի հոբելյանն է, հայ լրագրությանը, հասարակական համերաշխությանը եւ, միաժամանակ, հայ ազգային արժեքներին նվիրվածության մարմնավորումն է տիկին Աստղիկ Գեւորգյանի լրագրողական եւ հասարակական ողջ գործունեությունը, որի համար հոբելյանի առիթով նրան ջերմորեն շնորհավորում են Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության Երեւանի գրասենյակի ողջ աշխատակազմը, ինչպես նաեւ «Ազգ» օրաթերթի խմբագրությունը:**

# Նվազագույն աշխատավարձը՝ 35 հազար...

*1-ին էջից*

**Սակայն Լ. Սարգսյանն էլ իր պատասխանն ուներ՝ օլիգարխիկ համակարգի առկայությամբ, ստվերային տնտեսությամբ իշխանությունը չի կարող նորմալ նվազագույն զամբյուղ ապահովել: Ըստ նրա՝ եթե միայն ընդերքից ստացված եկամտի արդար վերաբախշում լիներ՝ նվազագույն զամբյուղի խնդիր չէր առաջանա: «Ինձ համար նվաստացուցիչ է այսպիսի օրինագծի քննարկումը», ասաց նա:**

**ՀՅԴ-ական տնտեսագետ Արծվիկ Մինասյանը հարցը երեք հարթության մեջ դիտարկեց՝ սոցիալական, տնտեսական եւ քաղաքական՝ պահանջարկը խթանելը կարեւոր համարելով ու համոզված, որ միայն բարձրացված եկամուտի քաղաքականությունը կարող է խթանել պահանջարկը, խրախուսել արտադրությունը եւ ճգնաժամից կարելի է դուրս գալ: Մինչդեռ Հայաստանում խեղդվում է պահանջարկը: Իսկ նվազագույն աշխատավարձի մեջ հարկերն ու տուրքերը հաշվի չառնելը (այն արտացոլված է նոմինալ աշխատավարձի 46 հազար դրամում) կասեցնելու է աշխատավարձի որեւէ բարձրացում, որովհետեւ հարկային լրացուցիչ բեռ է առաջացնելու գործատուի համար: Այդպիսով ստվերն է խթանվելու: Նա նշեց այսօր քննարկվելիք ՀՅԴ օրենսդրական նախաձեռնության առաջարկի գինը՝ ավելի բարձր նվազագույն աշխատավարձ սահմանելու վերաբերյալ, 17 միլիարդ դրամ՝ ասելով, որ պետք է «ցտեսություն» ասել այն կառավարությանը, որ այդ 17 միլիարդը չի գտնում:**

**Զարուհի Փոստանջյանը, նշելով, որ կառավարությունն ասում է գումար չկա ավելի շատ բարձրացնելու, ասաց. «Ստում եք, գումար կա, միլիոնավոր դոլարների հասնող գումարներ կան, որոնք գողացվում են այս կամ այն անձանց կողմից»: Ռուբեն Հակոբյանը համոզված էր՝ նորմալ հարկային քաղաքականության դեպքում մեր բյուջեն մեկ երրորդով կավելնա (նա եւս հանքարդյունաբերության ոլորտը կարգի բերելու կոչ արեց՝ նշելով, որ իմիտացիան ոչ մի տեղ չի տանի): Ամենահետաքրքրականը ԲՀԿ-ի պահվածքն էր, որի ներկայացուցիչ Նաիրա Զոհրաբյանը խմբակցության անունից խոսք քննադատեց այդքան նվազ բարձացում նախատեսող կառավարությանը՝ հայտարարելով, որ 7 տոկոս աճը մարդկային զարգացման որեւէ պարամետրով ապահովված չէ, այլապես պետք է ավելի մեծ լիներ նվազագույն աշխատավարձի բարձրացումը: ԲՀԿ դիրքորոշումը բացասական էր՝ նախաձեռնության փիլիսոփայությունն ու գործիքակազմը ընդունելի չեն ԲՀԿ-ի համար, բայց որ «2,5 հազարով մեկ ընտանիքի մեկ օրվա հարց է լուծվելու, մեզ դնում եք երկընտրանքի առջեւ», այս վերջինն ասվում էր քվեարկության վերաբերյալ մտածելու առումով:**

**ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի պատասխանը քննադատողներին չուշացավ. «Մեկն ասաց «ցտեսություն», կարոտ արթնացնող բառ է», նշեց՝ կասկածելով, որ դա նշանակում է մինչեւ նոր տեսություն ու հույս է ներշնչում իրենց: Նա նաեւ ՀՀԿ-ի հիմնական ընդդիմախոսի վիճակը պատկերացրեց՝ (ԲՀԿ-ի), որ համ քննադատում է, բայց նաեւ մարդկանց բարեկեցությանն ուղղված քվեարկությանը չխոչընդոտելու խնդիր ունի, հիշեցրեց նաեւ նորանկախ Հայաստանի առաջին տարիների համանման ելույթները, որոնց հեղինակները հետո պաշտոնյա դառնալով ցույց տվեցին, որ ցանկությունն ու խոսքը տարբեր են: Նա համաձայն էր, որ հարցը ցավոտ է եւ, իհարկե, 35 հազարով մարդիկ չեն կարող ապրել. «Եթե լիրիկական մասերը հանենք՝ կարելի է համաձայնել որոշ առաջարկների հետ»: Բայց եւ պատասխանատվությունը ՀՀԿ-ինն է, որ հետեւողականորեն մեթոդիկա է կիրառելու բարձրացման:**

**Տեսնենք, թե ինչ պատկեր կլինի քվեարկության ժամանակ:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հայկական պահակախմբերը ստանձնել են սիրիահայ համայնքի պաշտպանությունը

Սիրիայում ընթացող պատերազմն ու նրա շուրջը ստեղծված քաղաքական մթնոլորտն անմիջականորեն առնչվում են մեծ տերություններին: Նախկին փոխարտգործնախարար, դեսպան **Արման Նավասարդյանի** դիտարկմամբ՝ տեղի է ունենում տարածաշրջանային նոր ձեւավորում, եւ բախվում են Արեւմուտքի ու Ռուսաստանի ուժերը, իսկ նորությունն այս իրավիճակում Չինաստանի մասնակցությունն է:

Ըստ դեսպանի, որը լրագրողների հետ երեկ համատեղ ասուլիսում հանդիպեց լրագրողների հետ, Արեւմուտքը փորձում է հսկել ոչ միայն նավթային պաշարները, այլեւ դրանց փոխադրման ուղիները: Գերտերությունների ուժերի բախման հետեւանքով հերթական զոհը, ինչպես տեսանք, Սիրիան էր, Սիրիայի բնակչությունը, այդ թվում՝ սիրիահայությունը:

Սիրիահայ համայնքի պահպանումը Հայաստանի համար, անկասկած, կարեւոր է, սակայն աստիճանաբար դրվում է սիրիահայերին զուտ ֆիզիկապես փրկելու հարցը:

Հասարակական գործիչ **Կարինե Հակոբյանը** կարծում է, որ սիրիահայերի Հայաստան գալը պետք է կանոնակարգվի հայրենադարձության ծրագրով, առայժմ չկա նման ծրագիր, սակայն Կարինե Հակոբյանը նշում է, որ հայրենադարձության կամ ներգաղթի պետական ծրագիր ստեղծելն անհրաժեշտություն է: Ըստ նրա՝ պետք է արվի այնպես, որ սիրիահայության սերունդները ուզենան ապրել Հայաստանում, կապվեն հայրենիքին: «Այս նպատակին ծառայելու համար նաեւ պետք է բացվի հայրենադարձության կամ սիրիահայությանն աջակցելու գրասենյակ», երեկ ասուլիսի ժամանակ ասաց տիկին Հակոբյանը:

Ըստ քաղաքագետ Սերգեյ Շաքարյանցի՝ կան դեպքեր՝ հանձին սիրիահայության դրության, երբ պետք է մնալ ու պահպանել ունեցած հողերը, ունեցվածքն ու շինությունները: Եվ ովքեր էլ Սիրիայից եկել են Հայաստան, մտադիր են վերադառնալ Սիրիա, երբ պատերազմն ավարտվի: Երեխաների դպրոցական ծրագրից սկսած կառուցված է այնպես, որ դա շարունակի նրանց անցած ծրագիրն ու պատրաստի նրանց հետագայում Սիրիայում նորից սովորելուն:

Սերգեյ Շաքարյանցը մեկ այլ ասուլիսում ոչ պատահական համարեց այն, որ Սիրիայում հաճախակիացել են հայերի սպանությունները: «Վարձու մարդասպանները, որոնց ես ընդդիմություն անվանել չեմ ուզում, փոխարենը կանվանեմ ամերիկամետ արաբական երկրների վարձկաններ, նպատակ են դրել Սիրիայում հրահրել ներդավանական կռիվներ, որպեսզի այդ տարածքում հանգստության մի վայրկյան անգամ չլինի», նշում է քաղաքագետը, որը նաեւ տեղեկացնում է՝ այդ վարձկանները արդեն մտնում են քրիստոնեական թաղամասերը: Կոնկրետ հայկական քրիստոնեական թաղամասերն արդեն հսկում են հենց հայերից կազմված պահակախմբերը: Պաշտպանությունը հայկական թաղամասերի խիստ անհրաժեշտ է, քանի որ մահմեդականները մի րոպե անգամ չեն խնայի քրիստոնեական կառույցներն ու համայնքները: Սերգեյ Շաքարյանցը հիշեցնում է՝ եթե մահմեդական լինելով հանդերձ՝ նրանք ավերում, վերացնում են մզկիթները, ապա ի՞նչ կանեն եկեղեցիները:

Սիրիայի ներկայիս դրությունը, կամ ինչպես պարոն Շաքարյանցն է անվանում, այս հողը հասունացել է որպես Թուրքիայի ու Ռուսաստանի անհամաձայնության դաշտ: Բայց գլխավոր հարցը, ըստ նրա, մնում է այն, թե ինչքան երկար է սա տեւելու:

**Ի. Պ.**

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցել է «Օրրանին» Վանաձորի մասնաճյուղի եռահարկ շենքի կառուցման հարցում



Վանաձորում կայացել է «Օրրան-Գրիգորյան» նորակառույցի հանդիսավոր բացումը: Նորակառույց եռահարկ շենքը տեղակայված է քաղաքի սրտում եւ ծառայելու է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին, ինչպես նաեւ միայնակ ու անօգնական տարեցների կարիքները հոգալուն: Այն կառուցվել է Իտալիայի ԱԳՆ դրամաշնորհային ծրագրի հաղթող CIPS ՀԿ-ի, հայազգի բարերար Գրիգոր Գրիգորյանի (Մեծ Բրիտանիա), ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ մի շարք անհատ բարերարների առատաձեռն աջակցության շնորհիվ:

«Օրրանի» վանաձորյան մասնաճյուղը հիմնադրվել է 2009թ. հոկտեմբերին՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի եւ ՎիվաՍել-ՄՏՍ-ի հովանավորությամբ: Նախկին նոր շենքի կառուցումն այն գործում էր վարձակալած փոքրիկ տարածքում: Վանաձորում մեծ ու հարմարավետ սեփական կենտրոն ունենալու «Օրրանի» երազանքն իրականություն դարձրեցին կազմակերպության հետ համագործակցող օղակներն ու նրա կողքին գտնվող բարերարները: Ներկայումս կենտրոնում ընդգրկված է 55 երեխա:

«Մարդկանց աչքերում երջանկություն տեսնելիս առաջացող զգացումն ամենաթանկն է, հատկապես երբ խոսքը կյանքի դժվարություններ տեսած մարդկանց մասին է: Երեխաներն միանշանակ իրավունք ունեն տանիք ունենալու, նրանք պետք է տեսնեն միայն սեր եւ ջերմություն, եւ այդ սերն ու ջերմությունը նրանց տալը նախեւառաջ մեր՝ մեծահասակների պարտականությունն է»,- նշեց ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

«Օրրանի» ապահով եւ տաքուկ տանիքի ներքո ամենօրյա սնունդ, կրթություն, սոցիալական աջակցության եւ առողջապահական-հոգեբանական ծառայություններ են մատուցվում փողոցից կտրված ծայրահեղ կարիքավոր երեխաներին եւ միայնակ ու անօգնական տարեցներին:

Նորակառույց այս շենքում յուրաքանչյուր առավոտ տաք կերակուր կմատուցվի տարեցներին: Դպրոցական օրվա ավարտից անմիջապես հետո կենտրոն կժամանեն նաեւ սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաները: «Օրրանը» կհոգա նրանց առողջ սննդով ապահովելու կարիքը եւ փորձառու, բանիմաց մանկավարժների օգնությամբ՝ կաջակցի հաջորդ օրվա դասերը պատրաստելու հարցում: Կենտրոնը երեխաներին կընձեռի նաեւ տարբեր արհեստներ սովորելու, մշակութային օջախներ այցելելու, անվանի մարդկանց հյուրընկալելու եւ ամառային արձակուրդները ճամբարներում անցկացնելու հնարավորություն: Երեխաները հետագայում ձեռք կբերեն նաեւ աշխատանքի տեղավորվելու հնարավորություն եւ կօգտվեն անհրաժեշտ մի շարք այլ ծառայություններից:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն «Օրրանին» աջակցում է նաեւ ամենամյա բարեգործական ընթրիքներին կատարվող հանգանակության տեքով: Այս տարի կայացած ամենամյա 7-րդ բարեգործական ընթրիքի ընթացքում ՎիվաՍել-ՄՏՍ-ն կատարեց 90 միլիոն դրամի հանգանակություն, ինչպես նաեւ բնակարան նվիրեց կարիքավոր ընտանիքի:

## ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՊՀ-ՈՒՄ

# Նվիրված Սայաթ-Նովայի 300-ամյակին



ԵՊՀ-ի 8-րդ մասնաշենքի դահլիճում այսօր՝ ժամը 10-ին տեղի կունենա Սայաթ-Նովայի 300-ամյակին նվիրված գիտաժողով:

Հիշեցնենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ 2012 թվականը հռչակված է Սայաթ-Նովայի 300-ամյակի տարի:

Այսօրվա գիտաժողովի ընթացքում ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ **Սամվել Մուրադյանը** կներկայացնի զեկույց «Մեր մշտանոր Սայաթ-Նովան» թեմայով: Սայաթ-Նովայի ու նրա դարաշրջանի մասին կզեկուցի պրոֆեսոր Վազգեն Սաֆարյանը, կլինեն ուրիշ զեկուցումներ նույնպես: Միջոցառումն ունենալու է եւ գեղարվեստական մաս:

Բացման խոսքով հանդես կգան ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը եւ Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը:

**Ի. Պ.**

# «Հայաստանի բույրերը» կներկայացվեն ռուսաստանյան 1-ին ալիքի «Телекафе»-ի եթերում

**«Հրաշալի երկիր, հիանալի մարդիկ, ֆանտաստիկ սնունդ…», ռուսաստանյան «Первый канал. Всемирная сеть» ցանցի հեռուստաալիքներից «Телекафе»-ի հերթական նախագծերից մեկն էլ Հայաստանում է նկարահանվել, իսկ երկրի մասին ասվածը նախագծի գլխավոր խմբագիր ու ռեժիսոր Դարիա Հուբովայի խոսքերն են:**

**Ֆիլմի հաղորդավար, հայտնի ռեստորատոր (ռեստորանային բիզնեսի կառավարիչ) Գայանե Բրեհովան, շեֆ-խմբագիր Օլգա Կովալենկոն, երկու օպերատորները Հայյաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հրավերով Հայաստան էին այցելել սեպտեմբերին, երկրի հյուսիսից հարավ անցել 10 օրում եւ եղել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:**

**Հեռուստաալիքը էսթետիկ աղբյուրի՝ սննդի-ուտեստի մասին է այն մարդկանց համար, ովքեր ուտելիքի պատրաստումը արվեստ ու հաճույք են համարում: Տելեկաֆեն ազգային մշակույթի բազմազանությանը նայում է համադամասերների աչքերով՝ էմոցիաներին փորձելով հասնել համերի միջոցով, ներկայացնելով լավագույն շեֆ-խոհարարներին ու նրանց վարպետության գաղտնիքները:**

**«Նկարահանում էինք խոհարարական մի ճամփորդություն: Մեր հաղորդման գաղափարը ոչ միայն ներկայացնելն է, թե ինչ են ուտում մարդիկ ու ինչպես են դա պատրաստում, այլեւ թե ինչ նշանակություն կարող է ունենալ ուտելիքը, ճաշատեսակները, որոնց մարդիկ մանկուց են սովոր, ինչպիսին է երկիրն իր բույրերով ու համերով, թե որն է ավանդական խնջույքի, սեղան նստելու ուժը», հաղորդման հիմնական շեշտադրումներն այսպես է ներկայացնում Դարիա Հուբովան:**

**Հայտնի ասացվածքը՝ «ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու», ըստ Հուբովայի, կարելի է վերաձեւակերպել, թե «ասա՝ ինչ ես ուտում, ու կասեմ՝ ով ես դու»: Այսինքն՝ ըստ սննդի, ճաշատեսակների, կենցաղի ու խնջույքների, սովորույթների կարելի է շատ բան ասել երկրի, մշակույթի, մարդկանց ու հին արմատների եւ ավանդույթների մասին: Հուբովան հաստատում է. «Կան ուտեստների, ճաշատեսակների անուններ, որ Երեւանում, օրինակ, քչերը գիտեն, իսկ Տաթեւում կամ Գորիսում դա անգամ շուկայում հեշտ կգտնեք»: Ընդ որում, յուրաքանչյուր անվանում ունի իր բացատրությունը, միայն թե, ըստ Հուբովայի, հարկ է դրանք գտնել կամ ճիշտ մեկնաբանել եղած տեղեկությունները:**

**Առանձնահատուկ տպավորություն էլ նկարահանող խումբը ստացել է Արցախում՝ հայտնի ժենգյալով հացից: Նրանք պատկառանքով էին խոսում հայ հավաքական ուժի խորհրդանիշներից մեկի՝ Գանձասարի եկեղեցի այցելության մասին: Արցախի պատմամշակութային եւ հոգեւոր ժառանգությունը նորովի է իմաստավորել հայկական աշխարհի ընկալումը այցելուների աչքերում:**

**Ռուսաստանցի խմբագրի հիացմունքն անթաքույց է. «Պետք է բացել աչքերն ու շուրջը նայել. մեզ համար տառացիորեն ամեն ինչ առեղծվածային էր»:**

**Ըստ Հուբովայի՝ «Հայաստանում ճամփորդելիս բազմաթիվ անհավանական, ոգեղեն ուժով եւ գեղեցիկ մարդկանց հանդիպեցինք: Նրանցից շատերը բնավ էլ հարուստ չեն ապրում, բայց ապրում են այլ՝ հոգեւոր արժեքներով. սա իսկական բացահայտում էր: Մարդիկ ոչ միայն պահպանում, այլեւ վերականգնում են ազգային ավանդույթները»:**

**Դարիա Հուբովայի ազգանունը ժամանակին հայկական է եղել: Նախնիներից Եգոր Հուբովը, որի հեղինակությամբ 19-րդ դարասկզբին Հայաստանի մասին գրքեր են հրատարակվել, եղել է Գեւորգ Պռոշյան, բայց լինելով ցարական շրջանում ապրած պատմաբան՝ նրա անունը թարգմանել են Եգոր Հուբով - (Գուբով-Գուբա - ռուսերեն - շուրթ - Ա. Հ.):**

**«Ես միշտ երազել եմ այցելել Հայաստան, եւ ահա առաջին անգամ եղավ հենց այս այցելությունը, բայց ինձ զգում էի հրաշալիորեն, ինչպես տանը, հպարտանում ու ցավում էի, ինձ այս երկրի, ժողովրդի, մշակույթի մաս էի զգում», այցելության տպավորություններն է ներկայացնում առաջին անգամ նախնիների հայրենիքում, հայրենիքի բույրերի, հոտերի ու համերի մասին պատմելու նպատակով նկարահանումներ իրականացրած Դարիա Հուբովան:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Շուկա

## Օգոստոսին անշարժ գույքի գների չնչին աճ

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի` շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2012-ի օգոստոսին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 15869 գործարք, ինչը 13 տոկոսով ավելի է հուլիսի եւ 1,4 տոկոսով` 2011-ի օգոստոսի գործարքների համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը օգոստոսին հուլիսի համեմատ աճել է 18 տոկոսով, իսկ անցյալ տարվա օգոստոսի համեմատ` 6,9 տոկոսով: 4686 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 72,4 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Օտարված անշարժ գույքի 38 տոկոսը բնակարաններն են, իսկ օտարման գործարքների քանակի 40,7 տոկոսն արձանագրվել է Երեւանում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 57,8 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2012-ի հուլիսի համեմատ, օգոստոսին բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 15,3 տոկոսով, իսկ նախորդ տարվա օգոստոսի համեմատ նվազել 7,8 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա օգոստոսին հուլիսի համեմատ աճել են` 0,7 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել. (*տես աղյուսակ I)*

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | օգոստոս 2011թ. | օգոստոս 2012 թ. | հուլիս 2012թ. |
| Կենտրոն | 438200 | 416800 | 415050 |
| Արաբկիր | 337800 | 343700 | 342800 |
| Քանաքեռ-Զեյթուն | 262900 | 272500 | 270100 |
| Նոր Նորք | 226600 | 235000 | 232050 |
| Ավան | 247400 | 245050 | 243000 |
| Էրեբունի | 234300 | 239600 | 238300 |
| Շենգավիթ | 223100 | 240600 | 238500 |
| Դավթաշեն | 258100 | 265000 | 263100 |
| Աջափնյակ | 221200 | 231400 | 229800 |
| Մալաթիա-Սեբաստիա | 227400 | 229800 | 228400 |
| Նուբարաշեն | 145400 | 140500 | 140200 |
| Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից) | 256600 | 260000 | 258300 |

Մարզերում, բացառությամբ Երեւանի, 2012-ի օգոստոսին վաճառվել են 406 բնակարաններ, որոնց քանակը հուլիսի համեմատ աճել է 11,2 տոկոսով, իսկ 2011-ի օգոստոսի համեմատ 1,2 տոկոսով: Միաժամանակ, բնակարանների միջին գները օգոստոսին հուլիսի համեմատ մարզերում աճել են 0,4 տոկոսով:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները օգոստոսին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ: Աբովյանում եւ Վաղարշապատում (Էջմիածնում) 1 քմ-ի գինը 153 հազար հազար դրամ է կազմել: Ապա գալիս են Նոր Հաճընը` 128 հազար դրամ, Արմավիրը` 118 հազար դրամ, Եղեգնաձորը` 117 հազար դրամ, Գորիսը` 115 հազար դրամ, Իջեւանը` 114 հազար դրամ, Աշտարակը 113 հազար դրամ 1 քմ-ի դիմաց ցուցանիշներով:

2012-ի օգոստոսին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 397 գործարք, որից 126-ը` Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2012-ի օգոստոսին հուլիսի համեմատ աճել է 0,8 տոկոսով, իսկ մարզերում` 8,4 տոկոսով: 2011-ի օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 1,3 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած` նվազել 25,7 տոկոսով: Միջինացված` 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2012-ի օգոստոսին հուլիսի համեմատ աճել են 0,3 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել. (*տես աղյուսակ II)*

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | օգոստոս 2011թ. | օգոստոս 2012թ. | հուլիս 2012թ. |
| Կենտրոն | 453400 | 464500 | 463800 |
| Արաբկիր | 363300 | 370500 | 369600 |
| Քանաքեռ Զեյթուն | 269100 | 282000 | 280500 |
| Նորք-Մարաշ | 292100 | 308000 | 307100 |
| Ավան | 250800 | 261500 | 260400 |
| Էրեբունի | 240800 | 229300 | 228800 |
| Շենգավիթ | 235000 | 246200 | 245100 |
| Դավթաշեն | 272400 | 264000 | 263800 |
| Աջափնյակ | 234000 | 240000 | 239600 |
| Մալաթիա-Սեբաստիա | 235600 | 229500 | 228000 |
| Նուբարաշեն | 150100 | 144500 | 144500 |
| Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից) | 272400 | 276400 | 275600 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները օգոստոսին հուլիսի համեմատ աճել են 0,2 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո, ինչպես միշտ, Ծաղկաձորում են` 1 քմ-ն` 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է, որտեղ 1 քմ-ը կազմել է 154 հազար դրամ, երրորդը` Վաղարշապատը` 152 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը` 134 հազար դրամ, Նոր Հաճընը` 129 հազար դրամ, Գորիսը` 127 հազար դրամ, Ջերմուկը` 122 հազար դրամ, Իջեւանը` 121 հազար դրամ, Բյուրեղավանը` 120 հազար դրամ 1 քմ-ի դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է` 2012-ի օգոստոսին, 2011-ի օգոստոսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12,3 տոկոսով, աճուրդով վաճառքներինը` 1,1 տոկոսով:

2012-ի օգոստոսին հուլիսի համեմատ վարձակալության գործարքները աճել են 11,8 տոկոսով, իսկ 2011-ի օգոստոսի համեմատ` 21,1 տոկոսով:

Օգոստոսին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 162 գործարքներ, որից 112-ը` Երեւանում: 2012-ի հուլիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 5,3 տոկոսով, ընդ որում, Երեւանում աճել` 13,1 տոկոսով, իսկ մարզերում նվազել` 30,6 տոկոսով: 2011-ի օգոստոսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 16,5 տոկոսով, ընդ որում, Երեւանում` 18,2 տոկոսով, իսկ մարզերում` 12,3 տոկոսով:

Այսպիսով, օգոստոսին եւս Հայաստանի անշարժ գույքի շուկայում գները էական փոփոխությունների չեն ենթարկվել:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

## Օրենքը բոլորի՞ համար է, թե՞...

### *Բաց նամակ` ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ պարոն Անաստղի Մաթեւոսյանին*

Հանգամանքների բերումով, 1993 թ. բնակություն ենք հաստատել Բեռլին քաղաքում: Երեւան քաղաքում ունեմ սեփական բնակարան` Թումանյան 3, բնակարան 11 հասցեում, որտեղ բնակվել է եղբորս տղայի` Հմայակ Ղուկասյանի ընտանիքը: Վերջինիս լիազորագիր եմ տվել, որպեսզի նա իմ սեփական բնակարանը վարձակալության հանձնի իր ընտանիքի գոյությունը ապահովելու համար:

Եղբորս տղան 2001 թ. սեպտեմբերին վարձակալության պայմանագիր է կնքել «Զիվանյան ընդ սան» ՍՊ ընկերության հետ եւ բնակարանը 10 տարով վարձակալության է տվել այդ ընկերությանը:

Բանն այն է, որ եղբորս տղան պայմանագրի տեքստը չի կարդացել եւ ստորագրել է այն` վստահելով ընկերության տնօրենին, որը պատրաստակամություն է հայտնել լինել իր երեխաների քավորը:

Պայմանագրում նշվել է, որ սույն պայմանագրի դրույթները պատշաճ պահպանելու դեպքում պայմանագրի ավարտման դեպքում պայմանագիրը կերկարացվի նույն ժամկետով եւ նույն պայմաններով:

Նախ նման դրույթը չպետք է տեղ գտներ այդ պայմանագրում` առանց իմ համաձայնության: Լիազորագիրը տրվել է երեք տարի ժամանակով եւ այժմ, երբ պայմանագրի ժամկետը լրացել է, եւ դատարանի մեկ այլ վճռով վաղաժամկետ լուծվել է վերը նշված վարձակալության պայմանագիրը: Բացի այդ ես եմ այդ բնակարանի սեփականատերը եւ չեմ ցանկանում այն վարձակալության հանձնել:

Եվ վերջապես ընկերությունը` հանձին տնօրեն Նուբար Զիվանյանի, այնպիսի խախտումներ է թույլ տվել, որ խոսք չի կարող լինել նոր պայմանագիր կնքելու մասին:

Պայմանագրով իմ բնակարանի նկուղը հանձնվել է «Զիվանյան ընդ սան» ընկերությանը` այն օգտագործելու, բայց ընկերությունը այն սեփականաշնորհել է եւ գրավ է դրել: Դրանից մեծ խախտո՞ւմ: Այդ է պատճառը, երբ իմ բողոքով դեռեւս 2003 թ. դեկտեմբերին Կենտրոն դատարանը որոշում է կայացրել եւ հաստատել է մեր հաշտության համաձայնությունը, ըստ որի` «Զիվանյան ընդ սան» ընկերության տնօրեն Նուբար Զիվանյանը պարտավորվել է 05.09.2001 թ. կնքված վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալու կամ նշված պայմանագրի 8-րդ կետի համաձայն վաղաժամկետ լուծելուց հետո հաջորդ օրը հրաժարվել նկուղի սեփականատերը լինելու հավակնությունից եւ այդ նկուղը հանձնել ինձ: Պարտավորվում է նաեւ այդ ընթացքում նկուղը ոչ գրավ դնել, ոչ վարձակալի տալ, ոչ վաճառել եւ ոչ էլ նվիրել: Այդ որոշումը (2003 թ. դեկտեմբերի 12) օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ ենթակա չէ բողոքարկման:

Այն, որ նման պտօրինություն է թույլ տվել ընկերությունը, մեզ հայտնի է դարձել 2011 թ., այդ իսկ պատճառով էլ դիմել եմ դատական պաշտպանության: Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ռ. Ներսիսյան) 2011 թ. հունիսի 28-ի վճռով վաղաժամկետ լուծել է 05.10.2001 թ. կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը:

Դատարանը գտել է, որ ընկերությունը խախտել է պայմանագրի դրույթները, ինչպես վերը նշվեց, նկուղի վերաբերյալ: Բացի այդ, դատարանը էական խախտում է համարել նաեւ այն հանգամանքը, որ ընկերությունը առանց սեփականատիրոջ համաձայնության փակել եւ հանել է մուտքի դուռը եւ բակի կողմի պատշգամբից նոր մուտք է բացել: Դատարանը գտել է նաեւ, որ իրոք խախտվել է իմ սեփականության իրավունքը եւ զրկվել եմ կնոջս տեղափոխելու Երեւան եւ բուժումը շարունակելու հնարավորությունից, քանի որ բժիշկներն են այդպիսի խորհուրդ տվել եւ որի մասին գործում համապատասխան փաստաթղթեր կան:

Այդ օրինական վճիռը (28.06.2011 թ.) ընկերությունը բողոքարկել է Վերաքննիչ քաղաքացիական դատարան, եւ դատարանը 07.12.2011 թ. որոշմամբ մասնակիորեն բեկանել է վերը նշված վճիռը եւ գործն ուղարկել է նույն դատարանին նոր քննության (նախագահող դատավոր` Լ. Գրիգորյան):

Այս մասնակի բեկանումը վերաբերում է միայն նկուղին: Վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշվել է, որ չի անդրադառնում պայմանագրին, քանի որ այն վաղաժամկետ լուծվել է եւ գործի քննության ժամանակ էլ լրացել է պայմանագրի ժամկետը: Գտնում եմ, որ Վերաքննիչ դատարանը մասնակիորեն էլ չպետք է բեկաներ, քանի որ նկուղի վերաբերյալ ինչպես նշվեց, կա ՀՀ Կենտրոն դատարանի վերջնական որոշում: Թե ինչո՞ւ է դատավոր Լ. Գրիգորյանը այդպես վարվել, թողնում եմ նրա խղճին, սակայն ավելի քան համոզված եմ, որ նա պաշտպանության տակ է վերցրել Նուբար Զիվանյանին, թե ինչո՞ւ, կասեմ ստորեւ:

Նուբար Զիվանյանը, օգտվելով այն հանգամանքից, որ պայմանագրի ժամկետը լրացել է, դիմել է դատարան եւ խնդրել է կնքված պայմանագրի համաձայն պարտավորեցնել ինձ իր հետ կնքել նոր պայմանագիր` եւս 10 տարի ժամանակով:

Այստեղ խնդրում եմ ուշադիր լինել, քանի որ կատարվել է չտեսնված կողմնապահություն եւ ակնհայտ անարդարադատություն, որի իրավունքը չունի որեւէ դատավոր: Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ս. Թադեւոսյան), վարույթ ընդունելով նման հայցադիմում եւ իմանալով, որ իմ փաստաբանի միջնորդությունը պետք է ներկայացվի դատարան մասնակիորեն բեկանված մայր գործը եւ Ա. Թադեւոսյանի վարույթում գտնվող քաղ. գործը միացնելու մասին անում է անտեսելին: Շտապ, առանց կողմերին լսելու, հայտարարում է վճռի հրապարակման օր` 21.05.2012 թ. եւ այդ օրը վճռով պարտավորեցնում է ինձ կրկին 10 տարով պայմանագիր կնքել Նուբար Զիվանյանի հետ նույն պայմաններով, ինչ որ նշված է 05.10.2011 թ. պայմանագրում:

Վճիռը չի հիմնավորել, թե ինչո՞ւ պետք է հայցը բավարարի, ուշադրություն չի դարձրել կամ ավելի ճիշտ` չի ցանկացել ուշադրություն դարձնել այն հանգամանքների վրա, որ վճռով վաղաժամկետ լուծել է պայմանագիրը խախտումներ թույլ տալու համար, որի մասին վերը նշվեց: Չէ՞ որ 2001 թ. կնքված պայմանագրում նշված էր, որ վարձակալը պայմանագրի դրույթները պատշաճ պահպանելու դեպքում պետք է նոր պայմանագիր կնքել: Ինչ է, դատավոր Ս. Թադեւոսյանը իր կոլեգայի կայացրած վճռից եւ հիմնավորումներից տեղյակ չէ՞, որ 2001 թ. պայմանագիրը վաղաժամկետ լուծվել է էական խախտումներ թույլ տալու համար եւ նման պայմաններում ի՞նչ պարտավորեցնելու մասին է խոսքը: Նոր պայմանագիր կնքելը կլինի ստրկացուցիչ պայմանագիր:

Լավ, նման դեպքերում ես մտածում եմ, որ առաջին` Ա. Թադեւոսյանի գիտելիքները բավարար չեն եւ չի հասկացել, թե ինչ է անում, եւ երկրորդ` պաշտպանության տակ է վերցրել Նուբար Զիվանյանին: Համոզված եմ, որ երկրորդ տարբերակով է շարժվել դատավոր Ս. Թադեւոսյանը. ահա թե ինչու:

Զիվանյանը իմ բնակարանը արդեն 10 տարուց ավելի դարձրել է այսպես կոչված «Փակ ռեստորան», որի ծառայություններից օգտվում են շատ ու շատ պաշտոնատար անձինք:

Նման պայմաններում, դատարանի օրենքը թողած` նյութապես ապահովված անձի է պաշտպանում: Ի՞նչ է, օրենքը նրա՞նց համար է, թե՞ բոլորի: Ի՞նչ անեմ, ես էլ թոշակառու եմ եւ ազգանունս էլ Զիվանյան չէ: Մի խոսքով, ես խնդրում եմ հետամուտ լինել իմ գործին, որը բացարձակ ճշմարտություն է:

Եթե կատարվի միայն օրենքի պահանջը, ապա ես իրավունք կունենամ բնակվելու իմ սեփական բնակարանում:

**ԱԼԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2005-ից ի վեր Ադրբեջանում փառաբանվում է Իբադ Հուսեյնովի «քաջագործությունը»: Խոսքը վերաբերում է Մոնթե Մելքոնյանի զոհվելու փաստի իբադհուսեյնովյան «մեկնաբանությանը», որի շուրջը ծավալվել չարժե: Բավարարվենք նշելով, որ այդ «սյուժեն» դարձել է նրա մասին նկարահանված «փաստավավերագրական» ֆիլմի առանցքը: Նրա հետ հարցազրույց-

Խնդիրն այն է, որ Մոնթե Մելքոնյանի «ոչնչացման» իբադհուսեյնովյան «սյուժեն» առանց իշխանությունների հրահանգավորման չէր կարող տիրաժավորվել, եւ մի ստախոս չէր արժանանա պետական պարգեւների եւ մեծարման, եթե ամեն ինչի ակունքում չլիներ «համազգային առաջնորդ» Հեյդար Ալիեւի եւ Իբադ Հուսեյնովի «ռազմաճակատային բարեկամությունը»:

սացվի»: Իսկ պաշտոնաթող գեներալ Թալիբ Մամեդովը, ներկայացնելով Մարզիլի գյուղում 1993 թ. հունիսի 12-ի մարտի գրեթե նույն պատկերները, ինչ Մոնթե Մելքոնյանի զոհվելու մասին ասում են հայկական աղբյուրները, փաստորեն ձեռնոց է նետել Ադրբեջանի իշխող վարչախմբին:

Նա, ըստ էության, ստախոսության եւ ուրիշների «վաստակն ի-

ԱԴՐԲԵՋԱՆ

# Ադրբեջանում սկսել են բացահայտել սեփական կեղծարարությունները

ներ են անցկացրել ադրբեջանական գրեթե բոլոր լրատվամիջոցները:

Եվ ահա Բաքվում տեղեկատվական «ռումբ է պայթեցրել» գեներալ-լեյտենանտ Թալիբ Մամեդովը, որը երկար տարիներ գլխավորել է Ադրբեջանի ՊՆ հետախուզության վարչությունը, իսկ ղարաբաղյան պատերազմի տարիներին եղել ադրբեջանական բանակի 708-րդ բրիգադայի հրամանատարը: «Իբադ Հուսեյնով անունով մեկը փորձում է բոլորին համոզել, թե Մուղանլի գյուղում իր կողմից սպանված «զինյալը» (չակերտները մերն են - Վ. Ա.) եղել է Մոնթե Մելքոնյանը, բայց դա բացարձակապես ճիշտ չէ: Ժամանակին հավաքվել եւ համակարգվել են հետախուզական եւ այլ նյութեր, որոնք միանշանակորեն վկայում են, որ Մելքոնյանը «ոչնչացվել է» (չակերտները մերն են - Վ. Ա.) 1993 թ. հունիսի 12-ին 708-րդ բրիգադայի 2-րդ մոտոհրաձգային գումարտակի մարտիկների կողմից՝ Մարզիլի գյուղի մարտերում»,- հայտարարել է գեներալ-լեյտենանտ Մամեդովը «Թուրան» գործակալությանը տված բացառիկ հարցազրույցում եւ ավելացրել, թե «վստահ է, որ այդ փաստաթղթերը առ այսօր պահվում են ՊՆ հետախուզության վարչությունում»:

Մամեդովը ներկայումս պաշտոնաթող է, ինչն էլ, նրա ասելով, հնարավորություն է տվել, որ «առաջին անգամ շփվի լրատվամիջոցների հետ, քանի որ վրդովված է այն անարդարություններից եւ շահարկումներից, որոնք ոչ միայն չեն դադարում, այլեւ թափ են հավաքում»: Պաշտոնաթող գեներալի կարծիքով՝ «դա արվում է հանուն քաղաքական կապիտալի»: Ըստ էության, նրա բացահայտումների «աղը» հենց այդ ձեւակերպումն է:

**Wikipedia-ի՝ Իբադ Հուսեյնովին նվիրված հոդվածում առկա է այս բովանդակությամբ տեքստ. «Հարգելի Իբադ Հուսեյնով, Երախտագիտություն եմ հայտնում քեզ՝ հայրենիքի հրավերի համար: Հրավերի հեռագրում դու ընդծում ես, որ հանդիպել եւ ինձ հետ լուսանկարվել ես մարտական խրամատում 1994-ին: Ես լավ եմ հիշում այդ տարվա հանդիպումները զինվորների եւ սպաների հետ ռազմաճակատային շրջանում: Ադրբեջանական հողերը «հայ զավթիչներից պաշտպանելիս» (չակերտները մերն են - Վ. Ա.) ցուցաբերած քաջության համար ես քեզ իմ հրամանագրով պարգեւատրել եմ «Ադրբեջանի դրոշ» շքանշանով:**

**Իհարկե, ես ուրախ եմ, որ մարտական փառավոր ուղի անցած մի երիտասարդ ընտանիք է կազմում, բայց քանի որ ես շատ գործեր ունեմ, քո հարսանիքին ներկա գտնվել չեմ կարող: Սրտանց շնորհավորում եմ քեզ եւ քո գեղեցկուհի ընտրյալ-ադրբեջանուհուն, ձեզ ցանկանում երջանիկ կյանք, ընտանեկան երջանկություն: Այս ուրախառիթ օրը սրտանց շնորհավորում եմ ձեր ծնողներին, հարազատներին: Մաղթում եմ, որ մեր երիտասարդության համար այդպիսի երջանիկ օրեր շատ լինեն, իսկ տխրությունը՝ քիչ:**

*Հեյդար Ալիեւ*
*Նախագահի Ադրբեջանի Հանրապետության»:*

Նման պատվի Ադրբեջանում երեւի միայն Իբադ Հուսեյնովն է արժանացել: Ըստ երեւույթին, այն, որ Հեյդար Ալիեւը խրամատում հանդիպել եւ նրա հետ լուսանկարվել է, վարչախմբին պետք է եկել, որպեսզի ոչ միայն առաջինը, այլեւ երկրորդն էլ «հերոսների վերագրելու» մեջ մեղադրել է ոչ միայն Իբադ Հուսեյնովին, այլեւ՝ Ադրբեջանի իշխանություններին, քանի որ հստակ բնութագրել է, որ «դա արվում է հանուն քաղաքական կապիտալի»: Իբադ Հուսեյնովը քաղաքական դեմք չէ: Ուստի նրա անունով «քաղաքական կապիտալ կուտակում է» ո՞վ: Ակնհայտորեն ակնարկված է Իլհամ Ալիեւը, որը շարունակում է հոր եւ Իբադ Հուսեյնովի «մարտական փառավոր բարեկամությունը»՝ հնարավորություն ընձեռելով, որ ադրբեջանական «քաջարի զինվոր Շվեյկը» լիովին վայելի իր «վաստակի» պտուղները:

Երեւույթը խիստ հետաքրքրական է նաեւ նրանով, որ Ադրբեջանում, պարզվում է, դեռ կան մարդիկ, որ կարող են կարծրատիպեր կոտրել: ՊՆ հետախուզության վարչության նախկին պետ Թալիբ Մամեդովը բացել է շարքը: Ո՞վ կլինի հաջորդը, որ կբացահայտի ադրբեջանական բազմաթիվ առասպելներից եւս մեկի գաղտնիքը: Սա լուրջ խնդիր կարող է դառնալ կեղծիքի «կայսրության» ներկայիս կառավարիչների համար: Եթե, իհարկե, լկտիացած վարչախումբը պաշտոնաթող գեներալի հարցերը չլուծի «տեղական կարգով»: Այդ վտանգն էլ կա. Մամեդովի հարցազրույցին հետեւել է «Իբադ» ՀԿ-ի չափազանց կոշտ հայտարարությունը, որտեղ պաշտոնաթող գեներալի հասցեին սպառնալիքներ են հնչեցվել այն ենթատեքստով, որ «Իբադ Հուսեյնովը շատ բան կարող է անել 2013-ի նախագահական ընտրություններում եւ պատահական չէ, որ Թալիբ Մամեդովը հենց այս պահին (Ադրբեջանում ծայր առնող քաղաքական զարգացումների - Վ. Ա.) է փորձում նրան անվանարկել»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Սիրիայում Stinger-ների գոյությունը հաստատվում է

Սիրիական ընդդիմությունն ունի շարժական զենիթահրթիռային համալիրներ, որոնք արտադրված են զանազան պետություններում, այդ թվում ԱՄՆ-ում: Այդ մասին երեկ Մոսկվայում կազմակերպված մամլո ասուլիսում հայտարարել է ՌԴ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ **Նիկոլայ Մակարովը**:

«Գլխավոր շտաբի տվյալներով, Սիրիայում կառավարական ուժերի դեմ կռվող գրոհայիններն ունեն տարբեր պետությունների շարժական զենիթահրթիռային համալիրներ, այդ թվում ամերիկյան Stinger-ներ», ասել է Մակարովը:

Այդ զինատեսակների վերաբերյալ օրերս մի շարք լրատվամիջոցներ (այդ թվում **«Ազգը»**) հաղորդեցին, որ սիրիացի ընդդիմադիրները դրանք ստացել են Բարաք Օ-



բամայի վարչակազմի թույլտվության շնորհիվ:

Ամերիկացիները պնդում են, թե զենքը իրենք չեն մատակարարել: «Դա դեռ պետք է պարզել», ընդգծել է Մակարովը, որի խոսքերը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Մակարովի կարծիքով, արտերկրից գրոհայիններին զենք ու զինամթերք է առաքվում տարբեր փոխադրամիջոցներով, այդ թվում քաղաքացիական օդանավերով:

Հոկտեմբերի 17-ին սիրիական աղբյուրներից մեկը հաղորդեց, որ գրոհայիններին շարժական զենիթահրթիռային համալիրներ հանձնելու ԱՄՆ-ի որոշումը անմիջականորեն կապված է նախագահական ընտրարշավի ընթացքի հետ:

ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ - ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

# ԱՄՆ-ը խստացնում է համացանցի վերահսկողությունը

## *Ռուսաստանը հետ չի մնում*



**Վերջերս ԱՄՆ իշխանությունները սկսել են խստացնել համացանցային հաղորդակցությունների բովանդակության հսկողությունը: Այդ մասին ասվում է ՌԴ ԱԳՆ-ում հրապարակված «ԱՄՆ-ում մարդու իրավունքների ապահովման վիճակի մասին» զեկուցագրում:**

**Գերատեսչությունում ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնել են, որ համացանցի ամերիկյան հատվածում գրաքննությունն իրականացվում է ինչպես օրենսդրության միջոցով, այնպես էլ «ցանցի բովանդակության պատասխանատու» ընկերությունների վրա ճնշում գործադրելու միջոցով:**

**Իբրեւ օրինակ բերվում է «Համացանցում երեխաների պաշտպանության մասին» օրենքը, որը դրամական օժանդակության դիմաց դպրոցներին եւ գրադարաններին պարտավորեցնում է զտիչներ ստեղծել որոշ կայքէջերի շրջափակման նպատակով:**

**Բացի դրանից, ԱՄՆ կառավարությունը դատական հետապնդման սպառնալիքով ընկերություններին «դրդում է» կայքէջերից հանել «անցանկալի տեղեկությունները»:**

**Կոնգրեսում նաեւ քննարկվում է օրինագիծ «Կիբեռվտանգներին վերաբերող հետախուզական տվյալների փոխանակման ու պաշտպանության մասին»: Դրա ընդունումը կառավարությանը փաստորեն անսահմանափակ հնարավորություններ կընձեռի մասնավոր անձանց ցանցային գործունեությունը վերահսկելու համար:**

**Համացանցում ավանդական գաղափարախոսական դրույթներին ներհակ հայացքներ արտահայտող ամերիկացիները կարող են հետապնդումների ենթարկվել եւ նույնիսկ զրկվել աշխատանքից, ամփոփում է ՌԴ ԱԳՆ զեկուցագիրը: Բացի դրանից, ԱՄՆ-ը ակտիվորեն օգտագործում է համացանցը «քարոզչական պատերազմի» նպատակներով:**

**Ի դեպ, Ռուսաստանում նոյեմբերի 1-ից կիրարկվելու է թիվ 1398 դաշնային օրենքը, ըստ որի երկրում կստեղծվի արգելված տեղեկություններ պարունակող կայքէջերի ցանկ: Դա կարող է հիմք դառնալ Ռունետում գրաքննություն մտցնելու համար: Հարկ է նշել, որ վերջերս երկրում անցկացված հարցումներից մեկի տվյալների համաձայն, ռուսաստանցիների գրեթե 2/3-ը կողմ է համացանցում գրաքննության հաստատմանը:**

# Երեք հանդես տուգանվել է Օլանդի կողակցուհու նկարների պատճառով



Հոկտեմբերի 24-ին ֆրանսիական երեք հանդես տուգանվել է նախագահ Ֆրանսուա Օլանդի կողակցուհի Վալերի Տրիերվեյլերի լուսանկարների հրապարակման պատճառով: Խոսքը արձակուրդային լուսանկարների մասին է, որտեղ նա լողազգեստով է նախագահի Ֆոր դը Բրեգանսոն միջերկրածովյան նստավայրում:

Դատարանը Voici եւ Closer հանդեսներին պարտավորեցրել է 1500-ական եվրո տուգանք վճարել որպես վնասի փոխհատուցում: Public հանդեսի տուգանքը կազմել է 1000 եվրո: Տրիերվեյլերը պահանջել էր 20-25 հազար եվրո: Սակայն դատավորը նրան ասել է, որ պետք է նկատի ունենար նախագահական նստավայրի լողափին լուսանկարվելու հնարավորությունը:

Ավելի վաղ՝ սեպտեմբերին նույն լուսանկարների հրապարակման համար տուգանվել էր VSC հանդեսը:

Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ Տրիերվեյլերը ավելի վաղ ուրիշ սկանդալների պատճառ էր դարձել: 2012-ի մայիսին Twitter-ում նրա վերաբերյալ հեգնական հաղորդում տարածելու պատճառով աշխատանքից հեռացվել էր RTL ռադիոկայանի թղթակիցը: 2011-ի հոկտեմբերին Ֆրանսիայի ներքին գործնախարարը L'Express հանդեսին զրպարտության մեջ էր ամբաստանել այն հրապարակման համար, թե ոստիկանությանը կոչ է արվել մանրամասն տեղեկություններ հավաքել Տրիերվեյլերի անցյալի եւ նրա շրջապատի վերաբերյալ:

ՓԱՐԻԶ

## Արժանի պարգեւ, որը պատիվ է բերում յուրաքանչյուր հայի



Ապրիլ-24, 1915.

**Գեղանկարիչ Հովհաննես Հարությունյանին Ֆրանսիայի արվեստասեր հասարակությունն ընդունեց ու բարձր գնահատեց դեռեւս այն ժամանակ, երբ 1990 թ. Արվեստների միջազգային կենտրոնում բացվեց փարիզյան նրա առաջին անհատական ցուցահանդեսը:**

**1991 թ. Հովհաննես Հարությունյանը նախաձեռնում եւ Փարիզի արվեստների միջազգային կենտրոնում (Cité internationale des Arts) կազմակերպում է Հայաստանի նկարիչների մնայուն արվեստանոցի ձեռքբերումը:**

**1998 թվականին Ֆրանսիայի ազգային ժողովն ընդունում է փաստաթուղթ Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Այդ իրադարձության առիթով Հովհաննես Հարությունյանը նկարում է «24 ապրիլ, 1915 թ.» մեծադիր կտավը: Նույն տարում այն ցուցադրվում է Փարիզի «Աշնանային սալոնում»: Մեկ տարի անց ֆրանսահայ համայնքի եւ Ֆրանսիայում ՀՀ դեսպանատան կողմից նվիրվում է Ֆրանսիայի Ազգային ժողովին, ի նշան երախտագիտության՝ այդ փաստաթղթի ընդունման: 1999 թվականից կտավը մշտապես ցուցադրվում է Ֆրանսիայի Ազգային ժողովի արտասահմանյան սրահում:**

**2004թ. Հովհաննես Հարությունյանն իր ջանքերով կազմակերպում է Հայաստանի 50 նկարիչների կտավների ցուցահանդես-վաճառքը Փարիզում (Hotel Drouot, «Arménie 2004» (Vente aux enchères): Այդ դժվարին ու պատասխանատու աշխատանքը իրականացրել էր այնպիսի բարձր մակարդակով, որ պարզապես շարժել է օտարների նախանձը:**

**Ինձ համար հետաքրքրական մի աշխարհ էր դա, ուր կրկին անգամ բացահայտեցի մեր նկարիչների յուրօրինակ տաղանդն ու ստեղծագործական հնարքները:**

**Մեր ընկալումները յուրովի են, աշխարհի բազում կտավների կողքին հայ կերպարվեստն առանձնանում է իր գույներով ու մտածողությամբ...**

**Շուրջ քսան տարի ապրելով ու ստեղծագործելով արվեստների օրրան Փարիզում, Հովհաննես Հարությունյանը կարողացել է ավելի ու ավելի ներթափանցել ու գտնել իր ինքնահաստատման ուղին: Ամեն տարի ունենում է անհատական ցուցահանդեսներ, ուր խստապահանջ ֆրանսիացին պարզապես հիանում է նրա ստեղծագործություններով: Բարձր գնահատելով Ֆրանսիայի մշակույթին բերած նրա վաստակը, վերջերս Փարիզի արվեստի, գիտության ու գրականության ակադեմիան INTERCONTINENTAL հյուրանոցում հանդիսավոր արարողությամբ նրան պարգեւատրել է մեդալով ու խրախուսական դիպլոմով, համարելով արվեստի ճանապարհի սկիզբ, որը կտանի դեպի ավելի բարձր պարգեւների...**

**Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին Հովհաննես Հարությունյանը պատրաստում է «1915 թ., «ԴԵՐ- ԶՈՐ» նոր կտավը, որը կցուցադրվի Փարիզի «Աշնանային սալոն»-ում:**

ԱՆԺԵԼԱ ՍԱՀԱԿՅԱՆ
Փարիզ

## «ՆԱՐԵԿԱՑԻ» Արուեստի կենտրոնի ժողովրդական նուագարանների երիտասարդական համոյթի համերգները Գերմանիայում

**Գերմանիայի Շտուտգարթ քաղաքում այս օրերին տեղի ունեցող «Հայկական մշակութային օրերի» շրջանակներում, որը կազմակերպուել էր Հայ եկեղեցու Բադեն-Վիւրթեմբերգի հայ համայնքի եւ նրա ժրաջան հոգեւոր հովիւ Տ. Տիրատուր քհնյ. Սարդարեանի նախաձեռնութեամբ, Գերմանիայում էր գտնւում նաեւ «ՆԱՐԵԿԱՑԻ» ժողովրդական նուագարանների համոյթը: Համոյթը համերգներով հանդէս եկաւ Շտուտգարթ (20 հոկտեմբեր), Քէօլն (21 հոկտեմբեր) եւ Հանաու (22 հոկտեմբեր) քաղաքներում:**

**Թէեւ համոյթը Եւրոպական Միութիւն մուտքի արտօնագրերի դժուարութիւնների պատճառով ստիպուած էր Գերմանիա ժամանել աւելի փոքր կազմով, այնուհանդերձ նրա անդամները իրենց փայլուն կատարումներով կարողացան գերել ներկայ հայ եւ օտար հանդիսատեսների սիրտը եւ արժանանալ բարձր գնահատանքի:**

**Շուրջ մէկ եւ կէս ժամանոց համերգային ծրագիրը ներառնում էր հայկական հոգեւոր, դասական, գուսանական, ժողովրդական երգերի ու նուագների մի ընտրանի, որոնք փայլուն կերպով ներկայացրեց համոյթը՝ գեղարուեստական ղեկավար Յովիկ Սահակեանի ղեկավարութեամբ եւ մեներգչուհի Անուշ Ստեփանեանի մասնակցութեամբ: Ժողովրդական տարբեր նուագարանների (թառ, ուդ, քամանչա, դուդուկ, քանոն) վրայ հնչեցրած մենանուագները նոյնպէս արժանացան ունկնդիրների գնահատանքին:**

*Հայ եկեղեցու Հեսընի հայ համայնք*

## Ազգային կինոյի երախտավորը



Ինչպես «**Ազգը**» արդեն տեղեկացրել է, մեկնարկել է «Կինոաշուն 2012»-ը, որի առթիվ մարզերում, ուսումնական հաստատություններում, զորամասերում ցուցադրվում է հայկական հին ու նոր ֆիլմեր, կազմակերպվում հոբելյանական երեկոներ, գրքերի շնորհանդեսներ եւ այլն:

Այս անգամ «Կինոաշունը» տոնեց անվանի ռեժիսոր Յուրի Երզնկյանի 90-ամյակը հենց իր ծննդավայրում՝ Ալավերդիում: Յու. Երզնկյանին նվիրված երեկոյին ներկա էին Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն **Գեւորգ Գեւորգյանը**, ռեժիսոր Ալբերտ Մկրտչյանը, Յու. Երզնկյանի դուստրը՝ Անիտա Երզնկյանը եւ որդին՝ Ռուբեն Երզնկյանը, ինչպես նաեւ Ալավերդու քաղաքապետ Արտավազդ Վարոսյանը:

Յուրի Երզնկյանն իր ռեժիսորական գործունեությունը կինոյում սկսեց նկարահանելով բազմաթիվ կինոժուռնալներ ու վավերագրական կինոնկարներ, որոնք երիտասարդ ռեժիսորին դասեցին հանրապետության ականավոր վավերագրողների շարքին:

Նրա նկարահանած «Առաջին սիրո երգը» իր ամեն մի դրվագով հայկական է, ազգային՝ բեկնազարյանական կինոյի ակունքներից սերված: Այս ֆիլմը մեր կինոարվեստի այն հազվադեպ գործերի թվին է պատկանում, որի հանդիսականը միլիոնների է հասնում: Խոսքը կինոթատրոնների հանդիսականների մասին է... Ավելին, Խորհրդային Միությունում չկար մի հեղինակավոր բեմահարթակ, մշակութային օջախ, ուր չհնչեր Առնո Բաբաջանյանի երաժշտությունը:

Յու. Երզնկյանը «Խաթաբալա» ֆիլմի մասին ասել է. «Այս ֆիլմի էկրանավորման գաղափարը ես փայփայել եմ երկար տարիներ: Չգիտեմ, թե երբ է դա ծնվել: Գուցե սերը դեպի այդ գործն ինձ տվել է իմ ուսուցիչը՝ մեծ արվեստագետ Ռուբեն Սիմոնովը, որը երկար տարիներ երազում էր «Խաթաբալան» բեմադրել Վախթանգովի անվան թատրոնում»:

Այսօր, երբ նորովի ես նայում Յու. Երզնկյան ռեժիսորի այն ֆիլմերը, որոնք ժամանակին վերապահումով էին գնահատվում, կարծիքդ փոխվում է, երբ էկրանից հաղորդակցվում ես պրոֆեսիոնալիզմով հագեցած նրա ինքնատիպ գեղարվեստական ֆիլմերի հետ: Զանազանելով նրա նկարահանած ֆիլմերի լավն ու վատը, տեսնում ես, որ Յուրի Երզնկյանի պրոֆեսիոնալիզմը զգացվում է ոչ միայն ռեժիսուրայում, այլեւ դերասաններին, նկարիչներին, կոմպոզիտորներին ընտրելիս: Նա նաեւ կինոյի փայլուն տեսաբան եւ քննադատ էր: Յուրի Երզնկյանի նկարահանած բազմաթիվ ֆիլմեր ճանաչողական ու հրապարակախոսական խոր հնչեղություն ունեն, այդ թվում «Ո՞ւր ես գնում, զինվոր», «Գոտեմարտ», «Հրաժեշտի 5 նամակ» եւ այլ կինոնկարներ: Հայ կինոյին մատուցած ծառայությունների համար նա արժանացել է Հայաստանի ժողովրդական արտիստի կոչման եւ Հայաստանի պետական մրցանակի:

Զրուցեցինք Յուրի Երզնկյանի դուստր՝ Անիտա Երզնկյայնի հետ. «Յուրի Երզնկյանը մեծացել է արվեստագետների շրջապատում, որն էլ տարավ նրան մշակույթի ուղղությամբ: Յու. Երզնկյանը շատ աշխատասեր էր եւ անընդհատ ստեղծագործում էր: Նույնիսկ ֆիլմարտադրության դադարի պահերին նա գիրք էր գրում, թերթ էր թողարկում: Նա շատ հաճախ անդրադառնում էր գրական ստեղծագործություններին՝ հասկանալով, որ շատ կարեւոր է գրական հենքը» ասաց նա:

Յու. Երզնկյանի սաներից Հովհաննես Գալստյանն էլ իր հերթին հիշեց, որ 90-ական տարիներին իր վարպետը սաներին ստիպում էր անգործության չմատնվել եւ ժապավենի վրա ֆիլմ նկարահանել:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## «Լուսավոր շրջան» կինոնախագիծը Կիեւի կինոփառատոնի համատեղ արտադրության ֆորումում

Կիեւի Molodist 42-րդ միջազգային կինոփառատոնի շրջանակներում անցկացվող Համատեղ արտադրության ֆորումի (Boat Meeting Co-production Forum) ընտրական հանձնաժողովը հրապարակել է ընտրված 8 նախագծերը, որոնց հեղինակները հրավիրվել են Կիեւ՝ համագործակցության: Հեղինակավոր ֆորումի ընտրությանն է արժանացել նաեւ հայկական Պարալլելս Ֆիլմ ընկերության «Լուսավոր շրջան» (ռեժիսոր/պրոդյուսեր՝ Հովհաննես Գալստյան) կինոնախագիծը: Ֆորումի կողմից ընտրված եւս մեկ՝ Թուրքիան ներկայացնող հայազգի ռեժիսոր Արեն Պերդեցու «Կորած թռչուններ» կինոնախագծում Պարալլելս Ֆիլմը հանդես է գալիս որպես հայկական համա-արտադրող:

«Լուսավոր շրջան» նախագծի ներկայացումը կայացել է այս տարի մայիսին՝ Կաննի կինոշուկայում, որից հետո Եվրոպական աուդիովիզուալ ձեռնարկատերեր կազմակերպության կողմից «Լուսավոր շրջանը» ընտրվել եւ զարգացվել է Եվրոպական հեռանկարային 10 կինոնախագծերի աջակցության՝ BEST-Baltic bridges east by west ծրագրում:

«Լուսավոր շրջանի» արտադրությանը մասնակցում են Հայաստանը, Նորվեգիան, Նիդեռլանդները: Բանակցություններ են ընթանում ֆրանսիական եւ գերմանական կինոընկերությունների հետ՝ արտադրության համար անհրաժեշտ մնացած միջոցները լրացնելու նպատակով: Ֆիլմի նկարահանումները նախատեսված են 2013-ի ամռանը: Կինոնախագծին աջակցում է Հայաստանի ազգային կինոկենտրոնը:

http://www.molodist.com/en/fbm_conception_2012

## Անսիի տնօրենը՝ «ՌեԱնիմանիայի» պատվավոր խորհրդի անդամ

**Անիմացիայի աշխարհում թելադրող դիրք ունեցող Անսիի (Ֆրանսիա) միջազգային կինոփառատոնի գլխավոր տնօրեն Տիցիանա Լոսքին իր համաձայնությունն է տվել դառնալու «ՌեԱնիմանիա» միջազգային անիմացիոն փառատոնի պատվավոր միջազգային խորհրդի անդամ: Տիցիանա Լոսքիի որոշումը վստահության նշան է եւ հավաստիքը նրա, որ «ՌեԱնիմանիա»-ն իր հիմնադրման օրվանից չորս տարի անց հանդիսանում է առաջատար անիմացիոն կինոփառատոնը տարածաշրջանում: Անսիի միջազգային անիմացիոն կինոփառատոնի եւ «ՌեԱնիմանիա»-ի համագործակցությունն արդեն իսկ հարուստ պատմություն ունի. «ՌեԱնիմանիա»-ն պատիվ է ունեցել 2009թ. Տիցիանա Լոսքիին հյուրընկալել Հայաստանում: Տ. Լոսքիի՝ «ՌեԱնիմանիա»-ի պատվավոր խորհրդին անդամակցելն արդեն իսկ պաշտոնական համագործակցության նոր էջի սկիզբ է, որ նպաստելու է «ՌեԱնիմանիա»-ի առաջխաղացմանն ու ընդլայնմանը:**

**«ՌեԱնիմանիա»-ին ուղղված նամակում Տ. Լոսքին իր շնորհակալությունն է հայտնում պատվավոր միջազգային խորհրդի անդամ դառնալու հրավերի համար եւ խոստանում նեցուկ լինել փառատոնի զարգացմանը:**

**Հույս ունենք՝ 2013-ին «ՌեԱնիմանիա» 5-րդ հոբելյանական փառատոնի շրջանակում հյուրընկալել տիկին Տիցիանա Լոսքիին:**

**Նշենք, որ «ՌեԱնիմանիա» 4-րդ միջազգային կինոփառատոնը կմեկնարկի նոյեմբերի 3-ին եւ կշարունակվի մինչեւ նոյեմբերի 9-ը:**

## Գրքի շնորհանդես Կանադայում

Հոկտեմբերի 22-24-ը Կանադայում ՀՀ դեսպանության աջակցությամբ եւ Կանադայի Հայ դատի գրասենյակի կազմակերպմամբ Տորոնտո, Օտտավա եւ Մոնրեալ քաղաքներում տեղի ունեցավ Քրիս Բոհջալյանի «Ավազե ամրոցի աղջիկները» գրքի շնորհանդեսը:

Մայրաքաղաք Օտտավայում շնորհանդեսը կայացավ հոկտեմբերի 23-ին քաղաքի լավագույն՝ «Ռիդո» կենտրոնի «Chapters» գրախանութում:

Շնորհանդեսին ներկա գտնվող հյուրերին ուղղված իր խոսքում՝ Կանադայում ՀՀ դեսպան Արմեն Եգանյանն ընդգծեց Հայոց ցեղասպանության ճանաչման եւ «ցեղասպանություն» երեւույթի դատապարտման կարեւորությունը՝ նման ոճրագործությունները հետագայում բացառելու նպատակով:

## Գրական փառատոնի փակումը՝ այսօր

Մալյան թատրոնի դահլիճում այսօր՝ ժամը 11-ին տեղի կունենա «Գրական տապան-2012» գրական փառատոնի փակումը, որի ընթացքում առաջին անգամ կներկայացվի ռումինացի գրող եւ մարդաբան Կինգա Կալիի Տրանսիլվանիայի հայերի մասին պատմող «Հայր մեր» վավերագրական ֆիլմը: Իսկ ֆիլմի պրեմիերայից հետո «Գրական տապան-2012»-ի եվրոպացի ու հայ մասնակիցները հանդես կգան ասուլիսով եւ կամփոփեն հայկական գրական փառատոնը:

Ի. Պ.

# «Միկայի» հաջողության նկատմամբ անտարբեր են քաղաքային իշխանություններն ու սպորտնախարարությունը

## Շախմատի ֆեդերացիան էլ առայժմ չի մեծարել շախմատիստուհիներին

***Իսրայելի Էյլաթ քաղաքում վերջերս անցկացված շախմատի Եվրոպայի ակումբային առաջնությունում մեծ նվաճման հասավ Երեւանի «Միկա» կանանց թիմը՝ դառնալով արծաթե մրցանակակիր: Անհատական հաշվարկում էլ Էլինա Դանիելյանն 1-ին խաղատախտակի վրա արժանացավ բրոնզե մեդալի, իսկ Լելա Ջավախիշվիլին 4-րդ խաղատախտակի վրա հաջող ելույթի համար պարգեւատրվեց արծաթե մեդալով:***



ՖՈՏՈԼՈՒՐ

Երեկ շախմատիստի կենտրոնական տանը թիմի հայ անդամները՝ միջազգային գրոսմայստերներ Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը, միջազգային վարպետ Աննա Հայրապետյանը եւ «Միկա» ակումբի տնօրեն Աշոտ Վարդապետյանը հանդիպեցին լրագրողներին:

Սկզբում մրցաշարի մասին իրենց տպավորությունները հայտնեցին «Միկայի» շախմատիստուհիները:

**Էլինա Դանիելյան** - Անկեղծ ասած, մենք այդ մրցաշարում արծաթե մեդալների ակնկալիք ունեինք: Նախորդ խաղարկություններում թիմը մեկ անգամ նվաճել էր Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, 3 անգամ էլ արժանացել էր բրոնզե պարգեւների: Այնպես որ այժմ մենք բոլոր գույնի մեդալներն էլ ունենք մեր հավաքածուում: Ինչ խոսք, մրցաշարը բավականին ուժեղ կազմ էր հավաքել, Մոնտե Կառլոյի թիմը փաստորեն աշխարհի հավաքականն էր: Մենք լավ չսկսեցինք մրցաշարը, 2 անընդմեջ պարտություն կրեցինք՝ զիջելով «Յուգրային» եւ Մոնտե Կառլոյի թիմին: Հետագայում հավաքվեցինք, շտկեցինք դրությունն ու արժանացանք 2-րդ մրցանակին, որի համար շատ ուրախ եմ:

**Լիլիթ Մկրտչյան** - Իսկապես, երբ 2 անընդմեջ պարտություն կրեցինք, հայտնվեցինք մի այնպիսի իրավիճակում, որ մրցանակակիր դառնալու համար հարկավոր էր հաղթել մնացած 4 մրցախաղերը: Մենք գիտակցում էինք, որ չպետք է այլեւս «սայթաքենք»: Նաեւ հույս ունեինք, որ «Յուգրան» 2 դժվարին մրցախաղերում կպարտվի: Այդպես էլ եղավ ու մենք արծաթե մեդալ նվաճեցինք: Շատ ուրախ եմ այս հաջողության համար: Իսկապես սա մեծ նվաճում էր մեզ համար:

**Աննա Հայրապետյան** - Այնպես ստացվեց, որ ինձ բախտ չվիճակվեց գոնե մեկ պարտիա խաղալու Իսրայելում: Աղջիկները բավականին լավ մարզավիճակում էին, բացի այդ էլ վերջնագծում այլեւս միավոր կորցնելու իրավունք չունեին: Ուստի խաղաց թիմի ուժեղագույն կազմը: Իմ ներկայությամբ աշխատում էի հոգեպես նպաստել թիմի հաջող մրցելույթներին: Աղջիկները բավականին լավ հանդես եկան ու արժանի հաղթանակ տոնեցին:

«Միկա» թիմի տնօրեն, միջազգային մրցավար **Աշոտ Վարդապետյանը** նշեց, որ մրցաշարը շատ կարճ էր, ընդամենը 7 տուր: Սկզբում մտադրվել էր, որ Աննա Հայրապետյանն էլ խաղա, սակայն ելնելով ստեղծված իրավիճակից, ստիպված էր մշտապես միեւնույն կազմը մրցասպարեզ դուրս բերել:

Ասուլիսը վարող շախմատային մեկնաբան **Գագիկ Հովհաննիսյանի** կարծիքով «Միկան» այս մրցաշարում շատ կայուն ելույթներ ունեցավ: Անհատական ցուցանիշներով էլ մեր շախմատիստուհիները լավագույնների թվում էին: Եվ եթե հաշվարկը կատարվեր վաստակած միավորներից ելնելով, ապա Լելա Ջավախիշվիլին 4-րդ խաղատախտակի վրա արծաթի փոխարեն ոսկե մեդալ կնվաճեր, իսկ Լիլիթ Մկրտչյանը 3-րդ խաղատախտակի վրա կարժանանար բրոնզե մեդալի:

Իսկ ի՞նչ արձագանք է ստացել «Միկայի» հաջողությունը, ինչպիսի՞ պարգեւավճարներ են նախատեսված շախմատիստուհիների համար: **«Ազգի»** այս հարցին Աշոտ Վարդապետյանը ցավով նշեց, որ շնորհավորանքներ են ստացել միայն շախմատիստներից ու մարզիչներից, իսկ ահա քաղաքի իշխանությունները, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը, նույնիսկ շախմատի ֆեդերացիան անտարբեր են «Միկայի» նման նվաճման հանդեպ: Հարցը միայն դրամական խրախուսման մեջ չէ, այլ ընդհանրապես վերաբերմունքի: Ճիշտ է, «Միկա» ակումբը մասնավոր է, որը հովանավորում է հայտնի գործարար Միքայել Բաղդասարովը: Հենց վերջինիս ջանքերի շնորհիվ էլ «Միկայի» կանանց թիմը 2005-ից մասնակցում է Եվրոպայի ակումբային առաջնությանը: Նա մեծ ներդրում ունի ակումբային շախմատի հիմնադրման գործում: Ժամանակին Եվրոպայի ակումբային առաջնություններին մասնակցել է նաեւ տղամարդկանց «Միկա» թիմը: Սակայն այս անգամ ֆինանսական դժվարությունների պատճառով որոշվեց Իսրայել թիմ չուղարկել: Հաշվի էր առնվել նաեւ, որ շախմատի օլիմպիադայից հետո մեր շախմատիստները բավականին հոգնած են, ինչը կարող էր բացասաբար անդրադառնալ նրանց մրցելույթների վրա:

Խոսելով առաջիկա ծրագրերի մասին, Դանիելյանն ու Մկրտչյանը նշեցին, որ մեկնում են Ծաղկաձոր, որտեղ 10-օրյա ուսումնամարզական հավաք են անցկացնելու՝ նախապատրաստվելով Խանտի Մանսիյսկում կայանալիք կանանց աշխարհի առաջնությանը: Մեր շախմատիստուհիները հույս հայտնեցին, որ հնարավորինս հաջող ելույթներ կունենան: Այնուհետեւ Էլինա Դանիելյանը Լեւոն Արոնյանի հետ մասնակցելու է Չինաստանում կայանալիք ինտելեկտուալ խաղերի փառատոնին:

Դեկտեմբերի վերջին անցկացվելու է քաղաքների աշխարհի թիմային առաջնությունը, որին հրավեր է ստացել նաեւ Հայաստանը: Աշոտ Վարդապետյանը, որը նաեւ Երեւանի շախմատի ֆեդերացիայի նախագահն է, նշեց, որ դեռեւս պարզ չէ մասնակցության հարցը: Այդ մրցաշարին պետք է թիմ ներկայացնի Երեւան քաղաքը: Դեռեւս Երեւանի քաղաքապետի հետ այդ հարցով հանդիպում չի կայացել: Շախմատիստներից շատերն իրենց անձնական ծրագրերն ունեն ու մրցաշարերի են մասնակցում, այնպես որ դժվար կլինի թիմ կազմավորելը: Մինչդեռ հարկավոր է մինչեւ հոկտեմբերի վերջը մրցաշարի կազմակերպիչներին հստակ պատասխան տալ:

Աշոտ Վարդապետյանը նաեւ տեղեկացրեց, որ Երեւանը լինելով շախմատային հզոր կենտրոններից մեկը, մինչ օրս չի կազմակերպել բաց մրցաշար աշխարհի ուժեղագույն շախմատիստների մասնակցությամբ: Նա Երեւանի քաղաքապետարան ծրագիր է ներկայացրել, ըստ որի 2018-ին, երբ կնշվի Երեւանի հիմնադրման 2800-ամյակը, առաջարկել է շախմատային փառատոն կազմակերպել: Սակայն այդ հարցը դեռեւս չի քննարկվել:

# «Շախտյորը» ստանձնեց առաջատարի դերը

**Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի մրցաշարի 3-րդ տուրում Դոնեցկում 2-1 հաշվով վստահ հաղթանակ տոնելով «Չելսիի» նկատմամբ, «Շախտյորը» 7 միավորով միանձնյա գլխավորեց E խմբի մրցաշարային աղյուսակը: Արդեն 3-րդ րոպեին Տեյշեյրայի խփած արագ գոլի շնորհիվ «Շախտյորի» ֆուտբոլիստներն իրենց ավելի վստահ զգացին ու ողջ խաղի ընթացքում զգալի առավելություն ունեին մրցակցի նկատմամբ: Եվ եթե դաշտի տերերն իրացնեին գոլային պահերը, ապա կարող էին խոշոր հաշվով հաղթել: Գոլ խփելու մի քանի լավ առիթ էլ ներկայացավ ակտիվությամբ աչքի ընկած Հենրիխ Մխիթարյանին, սակայն հաջող խաղաց «Չելսիի» դարպասապահ Պետր Չեխը:**



**Խաղից հետո Հենրիխ Մխիթարյանը հետեւյալ կարծիքն է արտահայտել. «Լոնդոնի «Չելսին» լավ թիմ է: Արագ գոլի շնորհիվ խաղալը բավականին հեշտացավ: Մրցակցի պաշտպանությունում ազատ գոտիներ առաջացան եւ մենք կարողացանք գոլային պահեր ստեղծել: Միայն ափսոս, որ չհաջողվեց բոլոր պահերն իրացնել: Սակայն գլխավորը հաղթանակն էր: Ներկայումս «Շախտյորը» վերելքի մեջ է եւ պետք է աշխատենք, որ առաջընթացը շարունակվի: Դեռ ոչինչ ավարտված չէ խմբային մրցաշարում: Մեզ հարկ կլինի դեռեւս շատ աշխատել»:**

**Իսկ ահա թե ինչպիսի կարծիք են հայտնել թիմերի գլխավոր մարզիչները:**

**Միրչա Լուչեսկու («Շախտյոր») - Խաղն անցավ այնպես, ինչպես մտադրվել էի: «Չելսիի» հետ մրցավեճը վերջին շրջանում «Շախտյորի» անցկացրած հանդիպումներից ամենադժվարինն էր: Մենք լավ էինք ուսումնասիրել մրցակցին: Կարող եմ հաստատել, որ ներկայիս «Չելսին» ավելի ուժեղ է այն թիմից, որը մայիսին նվաճեց չեմպիոնների գավաթը: Ուստի մեր հաղթանակն ավելի է արժեւորվում: Մենք կարող էինք նույնիսկ խոշոր հաշվով հաղթել, սակայն Չեխը հրաշքներ էր գործում: Սա շատ կարեւոր հաղթանակ էր, սակայն մենք դեռ ոչնչի չենք հասել: Առջեւում դժվարին 3 հանդիպումներ են, որոնց ելքը գուշակելն անհնար է:**

**Ռոբերտո դի Մատեո («Չելսի») - Հերթական անգամ համոզվեցինք, որ «Շախտյորն» ուժեղ մրցակից է, որը հաջող է խաղում անգլիական ակումբների դեմ: Խփած արագ գոլն էլ լրացուցիչ լիցք հաղորդեց դաշտի տերերին: 2-րդ խաղակեսում մենք ավելի լավ հանդես եկանք, սակայն 2-րդ գոլը բաց թողեցինք: Այսօր «Չելսին» իր հնարավորություններից ցածր հանդես եկավ: Թիմը ֆիզիկապես եւ հոգեբանորեն լավ է պատրաստված, սակայն այսօր ինչ-որ բան չբավականացրեց: Մենք մեր ուժը ցույց կտանք հաջորդ խաղում: Մենք պարտավոր ենք սեփական հարկի տակ կայանալիք 2 խաղերում էլ հաղթել: Համոզված եմ, որ Լոնդոնում «Շախտյորին» լուրջ փորձություն է սպասում: Սեփական հարկի տակ մենք շատ ուժեղ ենք:**

**E խմբի մյուս խաղում անակնկալ մատուցեց դանիական «Նորդշելանը», որը ոչ-ոքի (1-1) ավարտեց մրցավեճը «Յուվենտուսի» հետ:**

**Բելառուսի չեմպիոն ԲԱՏԷ-ն, որ նախորդ 2 խաղերում հաղթել էր «Բավարիային» եւ «Լիլին», սեփական հարկի տակ 0-3 հաշվով պարտվեց իսպանական «Վալենսիային»: «Բավարիան» էլ հյուրընկալվելիս 1-0 հաշվով պարտության մատնեց «Լիլին»: Վերջինս դեռեւս միավոր չի վաստակել, իսկ խմբի մյուս 3 ակումբներն ունեն 6-ական միավոր:**

**G խմբում 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց «Բարսելոնը», որը միայն ավելացված ժամանակում խփած գոլի շնորհիվ 2-1 հաշվով պարտության մատնեց շոտլանդական «Սելթիկին»: «Բարսելոնի» կիսապաշտպան Խավին թիմի կազմում միջազգային 150-րդ հանդիպումն անցկացրեց: Դրանցից 129-ը նա անցկացրել է չեմպիոնների լիգայում: Այս ցուցանիշով Խավին «Բարսելոնի» ռեկորդակիրն է: Իսկ բացարձակ ռեկորդը պատկանում է «Միլանի» նախկին ավագ Պաոլո Մալդինիին (181 խաղ):**

**G խմբի մյուս խաղում Մոսկվայի «Սպարտակը» սեփական հարկի տակ 2-1 հաշվով առավելության հասավ Լիսաբոնի «Բենֆիկայի» նկատմամբ՝ տոնելով 1-ին հաղթանակը: «Սպարտակը» 3 միավորով 3-րդ տեղում է:**

**Դրամատիկ ելք ունեցավ H խմբի «Բրագա»-«Մանչեսթր Յունայթեդ» հանդիպումը, որում անգլիական ակումբը սկզբում 2 գոլ բաց թողնելով, ի վերջո կամային հաղթանակ տոնեց 3-2 հաշվով: Անգլիական թիմը 9 միավորով առաջատարն է: «Գալաթասարայ»-ՉՖՌ խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1:**

**Չեմպիոնների լիգայի 4-րդ տուրի հանդիպումները կկայանան նոյեմբերի 6-7-ին: Նոյեմբերի 7-ին «Շախտյորը» Լոնդոնում կհյուրընկալվի «Չելսիին»:**

# Շարապովան սկսեց հաղթանակով

**8 ուժեղագույն թենիսիստուհիները Ստամբուլում սկսեցին մրցավեճը աշխարհի ոչ պաշտոնական չեմպիոնուհուն որոշելու համար: Նախնական փուլում թենիսիստուհիները բաժանվել են 2 խմբի: «Սպիտակ» խմբում Մարիա Շարապովան իտալուհի Սառա Էրանիի հետ մրցավեճում առանձնակի դժվարությունների չհանդիպեց ու հաղթեց 2 խաղափուլում (6-3, 6-2): Նույնպիսի հաշվով լեհ Ագնեշկա Ռադվանսկան պարտության մատնեց չեխ Պետրա Կվիտովային:**

**«Կարմիր» խմբում կայացավ մեկ հանդիպում: Ամերիկուհի Սերենա Ուիլյամսը 2 խաղափուլում հաղթեց գերմանուհի Անգելիկա Կերբերին (6-4, 6-1):**

# Կողոպտել են Յոհան Կրոյֆի բնակարանը

**Անհայտ չարագործները կողոպտել են Յոհան Կրոյֆի բնակարանը՝ տանտիրոջը հասցնելով մոտ 500 հազար եվրոյի վնաս: 65-ամյա Կրոյֆը տանը չի եղել: Նա այս պահին ճանապարհորդում է Մեքսիկայով:**

**Լեգենդար նախկին ֆուտբոլիստը ներկայումս «Այաքսի» տնօրենների խորհրդի անդամ է եւ ղեկավարությանը օգնում է տեխնիկական հարցերում: Նա ժամանակին մարզել է «Այաքսը»՝ գլխավոր մարզչի պաշտոնից հեռանալով 1988-ին: 1989-1996-ին նրա գլխավորությամբ «Բարսելոնը» 4 անգամ նվաճել է Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը, մեկական անգամ դարձել է չեմպիոնների լիգայի եւ գավաթակիրների գավաթակիր:**

**Որպես ֆուտբոլիստ Կրոյֆը ֆուտբոլում մեծ նվաճումների է հասել: Նա «Ոսկե գնդակի» եռակի դափնեկիր է (1971, 1973, 1974-ին), 1974-ի աշխարհի փոխչեմպիոն: Կրոյֆը տոտալ ֆուտբոլի ամենավառ ներկայացուցիչն էր անցյալ դարի 70-ականներին: «Այաքսի» կազմում նա 3 տարի շարունակ դարձել է չեմպիոնների գավաթակիր, 8 անգամ՝ Հոլանդիայի չեմպիոն: Ընդհանուր առմամբ իր կյանքի 18 տարիները նա նվիրել է «Այաքսին»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Բժիշկներն իրենք են փորձում լուծումներ գտնել

Facebook սոցցանցում ստեղծված «Բժշկական ազատ անկախ արհմիություն» խմբում միավորված բուժաշխատողները տարածել են բաց նամակ՝ ուղղված հասարակությանն ու իշխանություններին: Նամակում արտահայտում են իրենց մտահոգությունն առողջապահության ոլորտում տեղ գտած մի շարք բացասական երեւույթների վերաբերյալ: Երեւույթներ, որոնք առաջացրել են համընդհանուր անվստահության ու անպաշտպանվածության մթնոլորտ եւ հիվանդների, եւ բուժաշխատողների շրջանում: Բուժաշխատողները կարծում են, որ առողջապահությունը նախ ինքը պետք է լինի առողջ: Սակայն բուժօգնության մասին օրենքը իր անորոշ ձեւակերպումներով արդյունավետ չի կանոնակարգում բուժօգնության համակարգը եւ չի արտահայտում բուժօգնություն իրականացնողի, բուժօգնություն ստացողի, հետեւաբար եւ պետության շահերը:

«Բժշկական ազատ անկախ արհմիությունը» գրում է, որ իրենք միայն չեն քննադատում, այլեւ փորձում են գտնել լուծման ուղիներ: Բոլորս գիտենք, որ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով շատերը բժշկի դիմում են միայն այն ժամանակ, երբ դանակը հասնում է ոսկորին, իսկ պետական բյուջեն էլ չի կարող առողջապահական բոլոր ծախսերը վերցնել իր վրա: Հետեւաբար բուժաշխատողներն առաջարկում են կատարել առողջության վարկավորման ծրագիր՝ ֆիքս տոկոսադրույքով, արագացված թղթաբանությամբ, եւ դա կատարել հենց հիվանդանոցում, եւ ծառայության դիմաց գումարը տալ ոչ թե հիվանդին, այլ հիվանդանոցին: Եթե մարդը չի կարող միանգամից վճարել 100 հազար դրամ, միգուցե կարողանա վճարել ամսական 10 հազար դրամ, եւ այդպես մարել ծառայության ծախսերը: Նման դեպքերում ծախսերի ռիսկերն էլ պետք է վերցնի պետությունը՝ իր համապատասխան սոցիալական ծրագրերով:

Բուժաշխատողները դժգոհում են նաեւ բժիշկների աշխատավարձերի չափից, համարելով, որ բժիշկների այսօրվա նվազագույն աշխատավարձը, որը կազմում է 50 հազար դրամ, պետք է բարձրացվի: Բացի դրանից՝ ֆիքսված աշխատավարձով աշխատող բուժաշխատողները չեն վճարվում ավելացված աշխատանքային ժամերի համար:

Բժշկական խումբն առաջարկում է կարգավորել նաեւ իրավական խնդիրները՝ մշակել կոշտ պատժաչափեր ու մեխանիզմներ ծառայողական պարտականություններ կատարելիս բժշկին խանգարելու կամ վնասելու վերաբերյալ: Մյուս կողմից՝ խմբի անդամները նաեւ առաջարկում են կանոնակարգել բժիշկների համար սահմանված պատժաչափերը:

**Ի. Պ.**

# Բժիշկները կյանք շնորհեցին մեր որդուն

Սեպտեմբերի 9-ին Երեւանի Օրբելի եղբայրների փողոցում տեղի ունեցած խոշոր ավտովթարից տուժել է նաեւ մեր որդին՝ 19-ամյա Վլադիմիր (Օնիկ) Մարկոսյանը: Այդ չարաբաստիկ օրը մեր ընտանիքի անդամների սրտում կմնա որպես հոգեկան ցնցման ու ցավի օր:

Մինչ մենք կտեղեկանայինք կատարվածի մասին, ծանր վնասվածքներ ստացած, անգիտակից վիճակում գտնվող մեր որդուն վթարի վայրից տեղափոխել են Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի թ.1 կլինիկական հիվանդանոց: Առաջին օրերին բժիշկները մեր որդու վիճակը գնահատում էին խիստ ծանր: Մեր ընտանիքը օրեր շարունակ աղոթքով խնդրում էր Աստծուն՝ պահպանել Օնիկի կյանքը, կարողություն տալ նրան վիրահատող ու բուժող բժիշկներին: Բայց շուտով մենք հասկացանք, որ նախախնամությունն այդ մասին հոգացել է այնժամ (եթե կարելի է այդ սոսկալի դեպքի հետ կապված նման բան ասել), երբ Օնիկին տեղափոխել են հատկապես այդ հիվանդանոց:

Հոգեկան այս ապրումների պահին մենք չենք կարող չբարձրաձայնել այն մասին, ինչ տեսանք այստեղ: Թ.1 կլինիկական հիվանդանոցի վիրաբույժներ Կարեն Գրիգորյանը, Արամ Միրիջանյանը եւ անեսթեզիոլոգիայի եւ ինտենսիվ թերապիայի կլինիկայի ղեկավար՝ պրոֆեսոր Իրինա Մալխասյանն իր բուժանձնակազմի հետ միասին կյանք շնորհեցին մեր որդուն:

Իրենց գործում լավ մասնագիտացած բժիշկներ շատ կան, բայց բժիշկը երբեք չի կարող լիարժեք օգնել իր հիվանդին, եթե զուրկ է մարդկային բարձր հատկանիշներից, եթե բժշկական օգնություն ցույց տալիս մտածում է միայն հիվանդի մարմնի մասին՝ մի կողմ թողնելով հոգեկան կապը՝ իր խնդծի տնօրինությանը հանձնված հիվանդի հետ: Այսօր մենք վստահ ենք, որ Օնիկի կյանքը փրկվեց հատկապես բժիշկների սրտացավության, անգամ անգիտակից վիճակում գտնվող մեր որդու հետ հոգեկան անբացատրելի կապ ստեղծելու շնորհիվ: Աներեւակայելի է, երբ ծնողն իր որդուն փրկել փորձող բժիշկներին ոչինչ չի ունենում խնդրելու: Մենք պարզապես զարմանքով տեսնում էինք նրանց հոգու ջերմությունը, սերն ու նվիրվածությունը մի երիտասարդ տղայի հանդեպ, որի ձայնն անգամ չէին լսել: Այդպես է լինում, երբ բժիշկն իր մասնագիտությունն ընտրելիս Հիպոկրատին երդում տալուց առաջ Աստծուն է երդվում:

Սիրելի Իրինա Մալխասյան, սիրելի վիրաբույժներ, մենք ձեզ շնորհակալություն չենք հայտնում: Չէ որ դուք էլ մեզ պես ուրախ եք, որ մեր որդին փրկվեց: Մենք ձեզ պարզապես ասում ենք, որ ամբողջ կյանքում կաղոթենք ձեր ու մեր որդու կյանքի համար հոգացած մյուս բոլոր բժիշկների համար:

**ԳՐԻԳՈՐ եւ ԿԱՐԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆՆԵՐ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շենք շինությունների մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ծերենցի 3/3 | Կաթսայատուն | 141.36 | 158.76 | 10,800,000 |
| 2 | Նալբանդյան 49/3 | Կաթսայատուն | 155.00 | 135.70 | 36,675,000 |
| 3 | Դավթաշեն 4 թաղ. ԿՁՀ 2 | Կաթսայատուն | 247.00 | 216.00 | 21,000,000 |
| 4 | Դավթաշեն 4 թաղ. ԿՁՀ 1 | Կաթսայատուն | 247.00 | 216.00 | 21,000,000 |
| 5 | Դավթաշեն 4 թաղ. ԿՁՀ 3 | Կաթսայատուն | 265.50 | 212.30 | 23,230,000 |
| 6 | Դավթաշեն 2 թաղ. ԿՁՀ 3 | Կաթսայատուն | 242.25 | 211.10 | 12,750,000 |
| 7 | Դավթաշեն 2 թաղ. ԿՁՀ 1 | Կաթսայատուն | 237.12 | 206.60 | 14,300,000 |
| 8 | Հալաբյան փողոց 31/5 հ. ԿՁՀ 5 | Կաթսայատուն | 367.60 | 267.80 | 12,000,000 |
| 9 | Կորյունի 6 շենք 28 շին | ոչ բնակելի տարածք | | 107.00 | 14,100,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ նոյեմբերի 1-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ նոյեմբերի 1-ը, ժամը 14:00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը՝

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող՝

- ՀՀ, ք. Երեւան, Հր. Քոչարի փող., 4 շենք, թիվ 4/9 հասցեում գտնվող 3452,6 ք.մ. ընդհանուր մակերեսով հասարակական նշ. շենքը: Լոտի մեկնարկային գինը՝ 1800000000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝0,06628 հա, 0,04524 հա եւ 0,068286 հա մակերեսով հողամասերն ընդհանուր սեփականություն են:

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, ք. Երեւան, Էրեբունի համայնք, Գաջեգործների 1 փող. շին. թիվ 1 հասցեում գտնվող 1683 ք.մ. ընդհանուր մակերեսով վարչական շենքը, 22125,0 ք.մ. ընդհանուր մակերեսով շինությունները՝արտադրամասեր, պահեստներ եւ օժանդակ շինություններ, 2,94137 հա ընդ. մակերեսով հողամասը: Լոտի մեկնարկային գինը 883000000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Ծովազարդի համայնք, Հաղթանակի փողոց N 10 հասցեում գտնվող 17646,2/15043,5 ք.մ. ընդհանուր մակերեսով հյուրանոցային համալիրը, շինությունները՝ պահակատուն՝ 26,5/16,1 ք.մ., ճաշարան՝ 405,5/338,9 ք.մ., մղման կայան՝ 109.9/90,0 ք.մ., քարի արտադրամաս 968,8/839,0 ք.մ., պարիսպ 129,0 ք.մ., հողամասը՝ վարձակալություն- 18,42 հա: Լոտի մեկնարկային գինը 1590000000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Ծովազարդի համայնք, Մարշալ Բաղրամյան ? 12 հասցեում գտնվող 2396,8/1816,8 ք.մ. ընդհանուր մակերեսով հյուրանոցային համալիրը, շինություններ՝ կաթսայատուն՝ 808,5/777,9 ք.մ., օժանդակ շինություն՝ 182,0/144,0 ք.մ., հիմք՝ 115.2/94,4 ք.մ., հողամասը վարձակալություն՝ 6,1949 հա: Լոտի մեկնարկային գինը՝ 169000000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Ծովազարդի համայնք, Ադմիրալ Իսակովի փողոց ? 10 հասցեում գտնվող 1309.0/991,5 ք.մ. ընդհանուր մակերեսով հյուրանոցային համալիրը, հողամասը վարձակալություն՝ 0,7518 հա: Լոտի մեկնարկային գինը 103500000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ, Շահումյան փ. 9/3 հասցեում գտնվող 7143,7 ք.մ. ընդհանուր մակերեսով մարզամշակութային համալիրը, 0,88 հա ընդ. մակերեսով հողամասը: Լոտի մեկնարկային գինը 875000000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն համայնք, Այգեստան 11 փող., թիվ 77 հասցեում գտնվող 1296,4 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 0,1605 հա ընդ. մակերեսով հողամասը: Լոտի մեկնարկային գինը 336000000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան... ք. Ջրվեժ 3-րդ դաշտ, 9-րդ հատված, թիվ 7 շինություն հասցեում գտնվող անշարժ գույք՝ բաղկացած՝ 101,6 ք.մ. մակերեսով արտադրական շինությունից եւ 0,1506 հա գյուղատնտեսական նշանակության հողամասից, առկա է նաեւ ինքնակամ կառույց 10-1, 10-2, 10-3 մակերեսը՝ 47,08 ք.մ., ինքնակամ կառույց 1-8, 1-9, 1-10 մակերսը՝ 329,1 ք.մ., ինքնակամ շինություն 1-5 մակերեսը՝ 21,1 ք.մ., ինքն. ջրավազան մակերեսը՝ 8,0 ք.մ., ինքն. շինություններ 1-7 մակերեսը՝ 6,5 ք.մ., ծածկարաններ մակերեսը՝ 43,85 ք.մ., ինքն. մարիսպ մակերեսը՝ 13,6 ք.մ., ինքն. զբաղեցրած հողամաս 007-1 մակերեսը՝ 0,0386 հա : Լոտի մեկնարկային գինը՝ 160500000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն համայնք, Տերյան փողոց, 19 շենք, թիվ 28, 29 հասցեում գտնվող անշարժ գույք՝ բաղկացած՝ 106,5 ք.մ. մակերեսով բնակարանից եւ 104,5 ք.մ. մակերեսով ձեղնահարկից: Լոտի մեկնարկային գինը՝ 165600000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդը՝ հոլանդական եղանակով, «բաց» ընթացակարգով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում 12.11.2012 թ.-ին, ժ. 12:00-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետն է 09.11.2012թ. ժ. 12:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ 09.11.2012թ. ներառյալ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

## Հայտարարություն

2012 թ. հոկտեմբերի 31-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում (ք. Երեւան, Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրված լիցենզիաների գործողության կասեցման եւ դադարեցման համար եզրակացություններ տվող հանձնաժողովի նիստը:

Օրակարգում՝

1. «ՇՈՒՄԵՐ» ՍՊԸ-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.10.2009թ. տրված թիվ ՊԼ-5352 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ 18.10.2012թ. դիմումի քննարկում:

2. «ՄՈՒՐԱԴ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԴԱՅՄՈՆԴ» ՍՊԸ-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.10.2011թ. տրված թիվ ՊԼ-5463 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ 22.10.2012թ. դիմումի քննարկում:

***ՀՀ ֆինանսների նախարարություն***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 24.10.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: